




ՄԱՍՆԱԳՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ • ԲՈՐ • ԳՆԱԿՎՈՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ISSN 1829-0280

# ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



## ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

## MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2020 [1]  
ԵՐԵՎԱՆ



## ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վ. Բոլոսովի անվան պեպրական համալսարանի ռեկտոր,  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

## ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

(շարունակություն. սկիզբը՝ նախորդ համարում)

Հոդվածում սոցիալական արդարության և հավասարության տեսանկյունից վերլուծվել են Բոլոնիայի գործընթացի նպատակներից մեկի՝ բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության էությունը և նշանակությունը:

Մասնավորապես, մանրամասնորեն ուսումնասիրվել են սոցիալական ուղղվածության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում: Հեղափոխվել են բարձրագույն կրթության մատչելիության և աղքատության փոխկապվածության հիմնախնդիրները՝ որակական և քանակական տեսանկյունից, վեր են հանվել բնակչության տարբեր սոցիալական խմբերի համար բարձրագույն կրթություն ստանալու իրական հնարավորությունները:

Կատարվել է բարձրագույն կրթության ֆինանսավորման ոլորտում ՀՀ պեպրական քաղաքականության համեմատական վերլուծություն աշխարհի տարբեր տարածաշրջանների և երկրների քաղաքականության հետ՝ հիմնվելով բուհերում ընդգրկվածության, վճարովի ու անվճար հիմունքներով ուսուցման, բուհերի ֆինանսավորման միջազգայնորեն կիրառվող այլ ցուցանիշների վրա: Հեղափոխվել են նաև ֆինանսական և այլ կարևոր գործոններ, որոնք բացասաբար են անդրադառնում բարձրագույն կրթության մատչելիության վրա՝ ստեղծելով անհավասար պայմաններ բնակչության հատկապես խոցելի խմբերի համար և հանգեցնելով նրանց խիստ սահմանափակ ընդգրկվածությանը բարձրագույն կրթության մեջ: Հեղափոխված գործոններն են. (ա) պեպրական բյուջեից բարձրագույն կրթությանը հատկացվող միջոցների չափազանց փոքր չափը, (բ) ուսման վարձավճարները, որոնք միջինում ավելի բարձր են, քան աղքատության գծից ցածր ապրող ընտանիքների եկամուտները, (գ) պեպրական նպաստների, կրթաթոշակների և ուսանողներին աջակցության այլ աղբյուրների ու

ծների սահմանափակ հնարավորությունները և այլն: Կատարվել է վերջին հինգ տարվա տվյալների համեմատական վերլուծություն:

Հոդվածի վերջին մասում հետազոտվել են բնակչության խոցելի խմբերից ուսանողներին հարկացվող աշակցությանն առնչվող հիմնահարցերը:

**Հիմնաբառեր.** բարձրագույն կրթություն, սոցիալական ուղղվածություն, ընդգրկվածություն, աղքատություն, ուսման վարձավճար, ֆինանսավորում

JEL: I23, I24

### 1. ՀՀ բուհեր ընդունելությունը

Հոդվածի առաջին մասում նշվել էր, որ 2012-2013-ից 2017-2018 ուստարիների ընթացքում ՀՀ բուհերում սովորողների ընդհանուր թիվը նվազել է 11.34%-ով, ընդ որում՝ նվազելով կրթության բոլոր աստիճաններում: Սակայն, սովորողների ընդհանուր թվի նվազումը չի անդրադարձել վճարովի և անվճար հիմունքներով սովորողների տոկոսային համամասնության վրա, որը, ըստ էության, մնացել է անփոփոխ:

Սովորողների ընդհանուր թվի և անվճար ու վճարովի հիմունքներով սովորողների տոկոսային համամասնության ոչ համարժեք փոփոխությունը պայմանավորված է հիմնականում այն հանգամանքով, որ սովորողների թվի նվազման պայմաններում բուհերում ուսումնառության տեղերի ընդհանուր թիվը գրեթե չի փոփոխվել, իսկ անվճար տեղերի թիվը թեև ոչ շատ, բայց աճել է: Մինչդեռ, բուհեր ընդունելության ժամանակ առաջնահերթ լրացվում են անվճար տեղերը, որոնք վճարովի տեղերից անհամեմատ քիչ են, ուստի, ավելի մեծ թվով թափուր են մնում վճարովի տեղերը:

Հարցին ավելի մանրամասնորեն անդրադառնալու նպատակով ուսումնասիրվել են առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության տեղերի մասին տվյալները: Վերջին 7 ուստարիների ընթացքում ՀՀ բուհեր ընդունելության տեղերի ընդհանուր թիվը տատանվել է 21250-ից 21743-ի շրջանում<sup>1</sup>, սակայն փոփոխվել է միայն անվճար տեղերի թիվը, իսկ վճարովին մնացել է հաստատուն: Ընդ որում, 2013-2014-ից 2015-2016 ուստարիների ընթացքում անվճար տեղերի թիվը ոչ շատ (23 տեղով), բայց նվազել է, իսկ 2016-2017 ուստարվանից որոշակիորեն աճել է. 2019-2020 ուստարվա անվճար տեղերի թիվը, 2015-2016-ի համեմատ, աճել է 332-ով կամ շուրջ 14%-ով, իսկ 2013-2014-ի համեմատ՝ 309-ով կամ շուրջ 13%-ով (աղյուսակ 1):

Առանձին ուսումնասիրվել է իրավիճակը վերջին 3 ուստարում: Այսպես, 2017-2018 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության տեղերի ընդհանուր թիվը կազմել է 21250<sup>2</sup>, որից 2500-ը՝ անվճար, իսկ 2019-

<sup>1</sup> Տվյալները ներառում են նաև անընդհատ ու ինտեգրված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը:

<sup>2</sup> Ընդունելության տեղերի նշված թվաքանակները ներառում են ոչ միայն բուհերին հատկացված այն տեղերը, որոնց ընդունելությունը կատարվում է միասնական քննություններով, այլև բոլոր այն տեղերը, որոնց համար ընդունելությունը կատարվում է այլ կարգով (բուհի կամ պետության կողմից սահմանված առանձին կարգով), այդ թվում՝ սփյուռքահայ ուսանողների, միջպետական համաձայնագրերի շրջանակներում, Արցախի Հանրապետությանը հատկացված նպատակային տեղերով, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության

2020 ուստարում այն դարձել է 21693, որից 2693-ը՝ անվճար<sup>3</sup>: Այսպիսով, անվճար տեղերի թիվը վերջին 3 տարում աճել է 193-ով կամ շուրջ 7.7 %-ով, իսկ վճարովի տեղերի թիվը մնացել է անփոփոխ:

Աղյուսակ 1

Առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության տեղերը<sup>4</sup>

N	Ուստարի	Անվճար տեղերի թիվ		Վճարովի տեղերի թիվ	Տեղերի ընդհանուր թիվ	
		տեղերի թիվ	փոփոխություն նախորդ ուստարվա նկատմամբ		տեղերի թիվ	փոփոխություն նախորդ ուստարվա նկատմամբ
1	2013-2014	2384		19000	21384	
2	2014-2015	2381	-0.13%	19000	21381	-0.01%
3	2015-2016	2361	-0.84%	19000	21361	-0.09%
4	2016-2017	2443	+3.47%	19000	21443	+0.38%
5	2017-2018 <sup>5</sup>	2500	+2.33%	19000	21250	-0.90%
6	2018-2019	2743	+9.72%	19000	21743	+2.32%
7	2019-2020	2693	-1.82%	19000	21693	-0.23%
<b>Ընդհանուր փոփոխությունը</b>			+12.96%			+1.45%

Համաձայն ընդունելության քննությունների արդյունքների վերլուծությունների՝<sup>6</sup> 2017 թ. հայտագրվել է 9789 դիմորդ, իսկ 2019 թ.՝ 10367 դիմորդ<sup>7</sup>, որից բուհեր ընդունվել են համապատասխանաբար 2017 թ.՝ դիմորդների 86.8%-ը (8495 ընդունված), իսկ 2019 թ.՝ 82.1%-ը (8513 ընդունված)<sup>8</sup>:

կրթահամալիրի, ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի, Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի ընդունելությունը և այլն:

<sup>3</sup> Տե՛ս «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի), առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 25.04.2019 թ. N476-Ն, 03.05.2018 թ. N 538-Ն և 20.04.2017 թ. N 434-Ն որոշումներ:

<sup>4</sup> Տե՛ս «ՀՀ բուհերի՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի), առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2013-2019 թթ. որոշումներ:

<sup>5</sup> Մինչև 2017-2018 ուստարին ընդունելության տեղերի թվաքանակները ներառում են ինչպես պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով, այնպես էլ առանց տարկետման իրավունքի անվճար տեղերը: 2018-2019 ուստարուց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով տեղերը վերացվել են, փոխարենը տեղեր են հատկացվել ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ նպատակային ընդունելության համար:

<sup>6</sup> Տե՛ս «2017 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն», Գնահատման և թեստավորման կենտրոն, 2017, Եր., էջ 33, <http://www.atc.am/files/verlucutyunner/2017/2017%20miasnakan%20ynhanur.pdf>:

<sup>7</sup> Տե՛ս «2019 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն», Գնահատման և թեստավորման կենտրոն, 2019, Եր., էջ 24, <http://www.atc.am/files/verlucutyunner/2019/2019-MIASNAKAN%20YNDHANUR.pdf>:

<sup>8</sup> 2018 թ. տվյալները բերված չեն, քանի որ, 12-ամյա հանրակրթական համակարգի անցմամբ պայմանավորված, 2018 թ. հայտագրվածների թիվը մյուս տարիների համեմատ պակաս է եղել գրեթե կրկնակի, ուստի այն համադրելի չէ վերլուծության մեջ ներառելու տեսանկյունից:

Դիմորդների 98-99%-ը ընդունվել է պետական, իսկ 1-2%-ը՝ ոչ պետական բուհեր:

Տվյալներից երևում է, որ 2017 թ. ընդունելության արդյունքներով՝ բուհերում թափուր է մնացել 12755 տեղ, որից ընդամենը շուրջ 300-ն է եղել անվճար ուսուցման տեղ, իսկ 2019 թ.՝ թափուր է մնացել 13180 տեղ, որից շուրջ 130-ը՝ անվճար<sup>9</sup>:

Այսպիսով, վերջին 3 տարիների բակալավրիատի ընդունելության արդյունքներով՝ բուհերում թափուր մնացած տեղերի ընդամենը 1-2%-են կազմել անվճար ուսուցման տեղերը:

**Եզրահանգումներ**

- Վերջին 3 տարում առկա ուսուցմամբ բակալավրիատի անվճար տեղերը ՀՀ բուհերում գրեթե ամբողջությամբ լրացվել են, մինչդեռ վճարովի տեղերի 65-69%-ը մնացել է թափուր:
- 2013-2014-ից 2019-2020 ուստարիների ընթացքում առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության տեղերի ընդհանուր թիվն աճել է 309-ով կամ շուրջ 1.45%-ով, ընդ որում՝ բոլորն էլ անվճար ուսուցման տեղեր, որոնց թիվն աճել է շուրջ 13%-ով: Թեև այդ աճը կարելի է հստակ գնահատել որպես պետական քաղաքականության դրական միտում, այնուամենայնիվ, անվճար կրթության պահանջարկի համեմատ այն շատ փոքր է, հատկապես՝ հաշվի առնելով բնակչության շուրջ 25% աղքատության մակարդակը: Ավելին, 309-ով անվճար տեղերի թվի աճը չի կարող էական դեր խաղալ հասարակության տարբեր խավերի՝ բարձրագույն կրթություն ստանալու անհավասար պայմանների խնդրի լուծման հարցում:
- Աղքատության մակարդակը նվազեցնելու նպատակով պետությունը պետք է էապես ավելացնի անվճար կրթություն ստանալու հնարավորությունները երկրում, քանի որ բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության ցուցանիշը շատ ավելի փոքր է, քան ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողների շրջանում:
- Նշված տվյալները կրկին վկայում են այն մասին, որ բնակչության զգալի հատվածի համար բարձրագույն կրթությունը մատչելի չէ, իսկ ուսման վարձավճարը և ուսման հետ կապված այլ ծախսերը բարձրագույն կրթություն ստանալու էական խոչընդոտներ են:

**2. Բարձրագույն կրթության մեջ համախառն ընդգրկվածության ցուցանիշը ՀՀ-ում**

Ուսումնասիրվել է նաև **համախառն ընդգրկվածության ցուցանիշը**<sup>10</sup> ՀՀ բուհերի բակալավրիատում ու մագիստրատուրայում 2018-2019 ուստարվա համար և այդ ցուցանիշի փոփոխությունը վերջին տարիներին: Այսպես, 2018-2019 ուստարում համախառն ընդգրկվածության ցուցանիշը բակալավրիատում կազմել է 52.2%, իսկ մագիստրատուրայում՝ 14.1% (աղյուսակ 2):

<sup>9</sup> Թափուր մնացած անվճար տեղերի մասին տեղեկությունը ստացված է Գնահատման և թեստավորման կենտրոնից:

<sup>10</sup> Բուհերում սովորողների ընդհանուր թվի տոկոսային համամասնությունը համապատասխան տարիքային խմբի բնակչության թվաքանակի նկատմամբ:

Ընդ որում, 2018-2019 ուստարում ընդգրկվածության ցուցանիշը բակալավրիատում, 2012-2013 ուստարվա նկատմամբ, աճել է 7.3%-ով, իսկ մագիստրատուրայում՝ 3.9%-ով, այն պարագայում, որ նույն ժամանակահատվածում բակալավրիատի ուսանողների ընդհանուր թիվը ՀՀ բուհերում նվազել է 20523-ով կամ շուրջ 22.8%-ով (90145 ուսանողից դառնալով 69622), իսկ մագիստրատուրայում՝ 1250-ով կամ շուրջ 10.3%-ով (12105 ուսանողից դառնալով 10855)<sup>11</sup>:

Աղյուսակ 2

**Համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշները**

Կրթության աստիճան	Ընդգրկվածություն 2012-2013 ուստարի <sup>12</sup>	Ընդգրկվածություն 2018-2019 ուստարի <sup>13</sup>	Փոփոխություն
Բակալավրիատ	44.9%	52.2%	+7.3%
Մագիստրատուրա	10.2%	14.1%	+3.9%

Նշված հանգամանքը բացատրվում է նախ նրանով, որ նշված 7 ուստարում մի կողմից դպրոցի շրջանավարտների և դիմորդների թիվն էապես նվազել է, իսկ մյուս կողմից՝ առկա ուսուցմամբ բակալավրիատ ընդունելության տեղերի թիվը թեև քիչ, բայց աճել է: Ընդ որում, դիմորդների թվի նվազումը կազմել է 4529 կամ շուրջ 30.4%, (2013 թ.՝ 14896 դիմորդ<sup>14</sup>, 2019 թ.՝ 10367 դիմորդ<sup>15</sup>), իսկ ընդունելության տեղերի թվի աճը կազմել է 359 կամ շուրջ 1.7% (աղյուսակ 1):

**Այսպիսով, համախառն ընդգրկվածության ցուցանիշը բակալավրիատում աճել է ոչ թե ուսանողների ընդհանուր թվի մեծացման, այլ այն բանի արդյունքում, որ համապատասխան փարիքային խմբի բնակչության և բուհերի դիմորդների թվի էական նվազման պայմաններում բուհեր ընդունելության տեղերի թիվն աճել է, թեև ոչ շատ:**

Կարևոր է հասկանալ, թե արդյոք բուհերում ուսուցման տեղերի թվի պահպանումը և անգամ աճը, ինչպես նաև ընդգրկվածության ցուցանիշի աճը՝ հատկապես ուսանողների թվաքանակի նվազման պայմաններում, ճիշտ պետական քաղաքականություն է, թե ոչ: Համահո՞ւնչ է արդյոք այդ քաղաքականությունը միջազգային միտումներին:

<sup>11</sup> Տե՛ս «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ. և դինամիկ շարքեր (2014-2018)» վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2019, էջ 219 և 240: «ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ. և դինամիկ շարքեր (2007-2012)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2013, էջ 178 և 199, [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf), [https://www.armstat.am/file/article/soc\\_12\\_11-12.pdf](https://www.armstat.am/file/article/soc_12_11-12.pdf):

<sup>12</sup> Տե՛ս «ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ. և դինամիկ շարքեր (2007-2012)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2013, էջ 178 և 199, [https://www.armstat.am/file/article/soc\\_12\\_11-12.pdf](https://www.armstat.am/file/article/soc_12_11-12.pdf):

<sup>13</sup> Տե՛ս «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ. և դինամիկ շարքեր (2014-2018)» վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2019, էջ 219 և 240, [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf):

<sup>14</sup> Տե՛ս «2013 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն», Գնահատման և թեստավորման կենտրոն, 2013, Եր., էջ 5, <http://www.atc.am/files/verlucutyunner/2013%20Miasnakan%20qnnutyunner%20yndhanur.pdf>:

<sup>15</sup> Տե՛ս «2019 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն», Գնահատման և թեստավորման կենտրոն, 2019, Եր., էջ 24, <http://www.atc.am/files/verlucutyunner/2019/2019-MIASNAKAN%20YNDHANUR.pdf>:

Հասարակության մեջ հաճախ կարծիք է հնչում, թե ՀՀ-ում բարձրագույն կրթություն ստացողների թիվը աշխատաշուկայի պահանջարկի նկատմամբ մեծ է, և երկիրը կարիք չունի նման թվաքանակով բարձրագույն կրթությամբ մասնագետների: Նման եզրահանգումներ են բերված նաև որոշ հետազոտություններում: Օրինակ, «Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի» կողմից իրականացված աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրության մեջ նշված է<sup>16</sup>:

*«ՀՀ բուհական երկաստիճան համակարգում կրթական անհրաժեշտ տեղերի տարեկան հաշվարկն ու ՀՀ ԿԳՆ կողմից մասնագիտական տարբեր ուսումնական հաստատություններին տեղերի հատկացումն իրականացվել են ոչ թե տնտեսական հաշվարկի ու աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի հարաբերակցության հիման վրա, այլ ապրիորի:*

*Ընդ որում, այս միտումը պահպանվում է անկախ այն փաստից, որ որոշ մասնագիտությունների գծով շուկայում լճացում է նկատվում: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ չնայած այն փաստին, որ տնտեսության որոշ ճյուղերում, մասնավորապես ծառայությունների մատուցման ոլորտում զբաղվածության կրճատում է կանխատեսվում, կրթական համակարգը շարունակում է լճացնել աշխատաշուկան հավելյալ աշխատուժով:*

Նշված կարծիքի հետ դժվար է համաձայնել, քանի որ բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածության աճը ՀՀ-ում համահունչ է համաշխարհային միտումներին: Այսպես.

*«Համաշխարհային մակարդակով բարձրագույն կրթության «լանդշաֆտը» շարունակում է զգալիորեն փոփոխվել: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի՝ 1970 թ. աշխարհում բուհ է ընդունվել 32.6 մլն ուսանող, իսկ 2000 թ.՝ 99.9 մլն՝ արձանագրելով 206% աճ: Չնայած կան որոշ նախանշաններ, որ բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածության աճը աշխարհում դանդաղում է (երիտասարդների թվաքանակի անկման և ծնելիության ցածր մակարդակի արդյունքում), հաշվարկվել է, որ բուհերում ընդգրկվածությունը 2015 թ. 214.1 միլիոնից 2040 թ. կդառնա 594.1 մլն: Սա նշանակում է 281% աճ 30 տարվա ընթացքում՝ 2000-ից մինչև 2030 թ.: Այս աճն ավելի բարձր է, քան 1970-2000 թթ. ընթացքում տեղի ունեցած աճը»<sup>17</sup>:*

Բացի դրանից, տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ներկայիս դարաշրջանում բարձրագույն կրթությունը ցանկացած երկրի տնտեսական աճի ու մրցունակության ապահովման կարևորագույն շարժիչներից և մարդկանց բարեկեցության հիմնական գրավականներից մեկն է<sup>18</sup>:

<sup>16</sup> «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները», Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2015, էջ 22-23, [http://www.minsportyouth.am/files/post/1463656793-1%20\(1\).pdf](http://www.minsportyouth.am/files/post/1463656793-1%20(1).pdf):

<sup>17</sup> Calderon A., The Higher Education Landscape is Changing Fast, World University News, 22 June 2018, <https://www.universityworldnews.com/post.php?story=2018062208555853>.

<sup>18</sup> St'u Lane J.E., Higher Education and Economic Competitiveness, in the book "Universities and Colleges as Economic Drivers: Measuring Higher Education's Role in Economic Development", SUNY series, Critical Issues in Higher Education, State University of New York Press, 2012, էջ 1-20, [https://www.researchgate.net/profile/Jason\\_Lane3/publication/271387344\\_Higher\\_Education\\_and\\_Economic\\_Competitiveness/links/54cf9ef60cf298d65664b618.pdf](https://www.researchgate.net/profile/Jason_Lane3/publication/271387344_Higher_Education_and_Economic_Competitiveness/links/54cf9ef60cf298d65664b618.pdf):

**Եզրահանգումներ**

- ՀՀ բուհերում համախառն ընդգրկվածության ցուցանիշը վերջին 7 ուստարում աճել է, ինչը պայմանավորված է համապատասխան տարիքային խմբի բնակչության և դիմորդների թվի էական նվազման պարագայում (շուրջ 30.4%) բուհերում ընդունելության տեղերի թվի թեև փոքր, բայց աճով (շուրջ 1.7%-ով), ինչպես նաև երիտասարդների կողմից բարձրագույն կրթություն ստանալու անհրաժեշտության կարևորմամբ և բարձրագույն կրթության պահանջարկի շեշտակի բարձրացմամբ:
- Չնայած տարատեսակ կարծիքներին, այնուհանդերձ, այն փաստը, որ նույնիսկ դիմորդների թվաքանակի նվազման պայմաններում բուհերում ուսուցման տեղերի թիվը և, արդյունքում, բարձրագույն կրթության մեջ համախառն ընդգրկվածության ցուցանիշը աճում է, վկայում է, որ ՀՀ պետական քաղաքականությունը համահունչ է համաշխարհային միտումներին:
- Այդ քաղաքականությունը ոչ ուղղակիորեն նպաստում է նաև պետության սոցիալական քաղաքականությանը, քանի որ մեծանում են աղքատ ընտանիքներից երեխաների՝ բուհ ընդունվելու հնարավորությունները. բուհեր ընդունելության մրցակցությունն իջնում է, ուստի, հնարավոր է դառնում բուհ ընդունվել ոչ բարձր միավորներով: Վերջինս էլ, իր հերթին, հնարավորություն է ստեղծում պատրաստվել քննություններին սեփական ուժերով՝ առանց կրկնուսույցների հետ պարապելու: Կարևոր է նշել, որ նման քաղաքականություն են որդեգրել նաև Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) մի շարք երկրներ<sup>19</sup>:

### **3. Համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշի համեմատությունը փարածաշրջանների այլ երկրների ցուցանիշների հետ**

Կարևոր է հասկանալ նաև, թե ինչպիսին է ՀՀ-ում բարձրագույն կրթության մեջ համախառն ընդգրկվածությունը՝ այլ երկրների և տարածաշրջանների համեմատությամբ:

**Միանգամից պետք է նշել, որ բակալավրիատում համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշը բավականին բարձր է աշխարհի միջին ցուցանիշի համեմատ: 2018-2019 ուստարում ՀՀ ցուցանիշը կազմել է 52.2%, մինչդեռ 2018 թ. աշխարհի միջին ցուցանիշը կազմել է 38.04%:**

**Բակալավրիատում համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշը գրեթե համարժեք է նաև բարձր-միջին եկամուտ ունեցող երկրների միջին ցուցանիշին, որը 2018 թ. կազմել է 53.04%:**

Հարկ է նշել, որ Համաշխարհային բանկի երկրների՝ ըստ եկամուտների վերջին դասակարգմամբ ՀՀ-ն ընդգրկված է հենց բարձր-միջին եկամուտ ունեցող երկրների ցանկում:

<sup>19</sup> St' u European Commission /EACEA/ Eurydice (2011). Modernisation of Higher Education in Europe 2011: Funding and the Social Dimension. Brussels: Eurydice. էջ 60-61, <http://www.finhed.org/media/files/12-131EN.pdf>:



**Այնուամենայնիվ, բակալավրիատում համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշը զգալիորեն ցածր է (22.9%-ով) բարձր եկամուտ ունեցող երկրների միջին ցուցանիշից, ինչը 2018 թ. կազմել է 75.1%: Այն էապես ցածր է նաև Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի երկրների միջին ցուցանիշներից, համապատասխանաբար՝ 34.06%-ով և 19.36%-ով (աղյուսակ 3):**

**Աղյուսակ 3**

**Բակալավրիատում համախառն ընդգրկվածության ցուցանիշը տարբեր տարածաշրջանների և եկամտային խմբերի երկրների համար<sup>20</sup>, 2018 թ.**

Տարածաշրջաններ	Համախառն ընդգրկվածության միջին ցուցանիշ
Եվրոպա	71.56%
Հյուսիսային Ամերիկա	86.26%
Լատինական Ամերիկա և Կարիբներ	51.76%
Կենտրոնական Ասիա	24.01%
Հարավային Ասիա	25.76%
Արևմտյան Ասիա	56.35%
Արևելյան Ասիա	51.38%
Աֆրիկա (Ենթասահարա)	9.06%
Հյուսիսային Աֆրիկա	34.87%
Օվկիանիա (Ավստրալիա և Նոր Զելանդիա)	107.77%
Օվկիանիա	73.24%
Երկրների խմբերը՝ ըստ եկամուտների	Համախառն ընդգրկվածության միջին ցուցանիշ
Ցածր եկամուտ ունեցող երկրներ	8.88%
Ցածր-միջին եկամուտ ունեցող երկրներ	24.81%
Միջին եկամուտ ունեցող երկրներ	36.34%
Բարձր-միջին եկամուտ ունեցող երկրներ	53.04%
Բարձր եկամուտ ունեցող երկրներ	75.10%
<b>Հայաստան</b>	<b>52.2%</b>
<b>Աշխարհի միջին</b>	<b>38.04%</b>


Գծապատկեր 1-ում ակնառու պատկերված են բակալավրիատում համախառն ընդգրկվածության միջին ցուցանիշի տարբերությունները տարբեր տարածաշրջանների, իսկ գծապատկեր 2-ում՝ տարբեր եկամտային խմբերի երկրների համար՝ ՀՀ-ի համապատասխան ցուցանիշի հետ համադրությամբ:

**Եզրահանգումներ**


- 2018 թ. տվյալներով՝ բակալավրիատում համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշը՝
  - բարձր է աշխարհի միջին ցուցանիշից՝ գերազանցելով այն 14.16%-ով,
  - զրեթե համարժեք է բարձր-միջին եկամուտ ունեցող երկրների (այդ խմբում ընդգրկված է նաև ՀՀ-ն) միջին ցուցանիշին, որը 53.04% է,
  - զգալիորեն ցածր է բարձր եկամուտ ունեցող, Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի երկրների միջին ցուցանիշներից, համապատասխանաբար՝ 22.9%-ով, 34.07%-ով և 19.36%-ով:

<sup>20</sup> Տե՛ս UNESCO Institute for Statistics; <http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=144>:

- ՀՀ-ն պետք է ձգտի բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշը հասցնել եվրոպական երկրների միջին ցուցանիշին:



**Գծապատկեր 1. Համախառն ընդգրկվածության միջին ցուցանիշը՝ ըստ փարածաշրջանների, 2018 թ.**



**Գծապատկեր 2. Համախառն ընդգրկվածության միջին ցուցանիշը՝ ըստ երկրների եկամտային խմբերի, 2018 թ.**

**4. Համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշը՝ ըստ բնակչության սոցիալական խմբերի**

**Թեև բարձրագույն կրթության մեջ համախառն ընդգրկվածության ՀՀ ցուցանիշը բավականին բարձր է, այնուհանդերձ, այն զգալիորեն փարբեր է ոչ աղքատ, աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքների համար:**

Այսպես, 2017 թ. «բարձրագույն կրթական հաստատություններում ոչ աղքատ տնային տնտեսությունների համախառն ընդգրկվածությունը կազմել

է 53%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) տնային տնտեսություններինը՝ 29% և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններինը՝ 0%»<sup>21</sup>:

Բերված տվյալները նաև վկայում են, որ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիների՝ պետական բուհերում անվճար կրթություն ստանալու իրավունքի իրացումը ՀՀ-ում լիարժեք չի ապահովվում:

### **5. Բարձրագույն կրթության ոլորտում պետական և ոչ պետական ծախսերը ՀՀ-ում**

Այս բաժնում ներկայացված են բարձրագույն կրթությանը հատկացվող պետական և ոչ պետական միջոցներին և ուսման վարձավճարներին վերաբերող հարցերի ուսումնասիրության արդյունքները:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Կրթությունը մի հայացքով, 2018» հրատարակության<sup>22</sup> մեջ նշված է, որ պետության կողմից տնտեսության տարբեր ոլորտներին (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, պաշտպանություն, գյուղատնտեսություն և այլն) հատկացվող բյուջետային միջոցների չափը որոշվում է՝ ելնելով պետության գերակայություններից, ինչպես նաև տվյալ ոլորտում մասնավոր ներդրումների առկայությունից և դրանց չափից:

Կրթությունը (ներառյալ՝ բարձրագույն կրթությունը) այն ոլորտներից է, որին կառավարությունները, որպես կանոն, հատկացնում են բավականաչափ բյուջետային միջոցներ, իսկ եվրոպական երկրներում բուհերը ֆինանսավորվում են գլխավորապես պետական միջոցներից<sup>23</sup>:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման ոլորտում պետական քաղաքականության գնահատման միջազգայնորեն ընդունված ցուցանիշներն են՝

- բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափը՝ որպես ընդհանուր պետական ծախսերի մասնաբաժին,
- բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս,
- մեկ ուսանողի վրա կատարվող տարեկան ծախսի չափը՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոս:

Այս ցուցանիշների օգտագործման նպատակահարմարությունը պայմանավորված է նրանով, որ դրանք համադրելի են և թույլ են տալիս համեմատություն կատարել տարբեր երկրների միջև՝ հաշվի առնելով երկրների սոցիալ-տնտեսական վիճակը, ՀՆԱ-ն և տնտեսական աճը: Նշված ցուցանիշներից որևէ մեկն առանձին վերցրած չի տրամադրում բավարար տեղեկու-

<sup>21</sup> «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018», Վիճակագրական-վերլուծական զեկույց, ըստ 2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, էջ 182, [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf):

<sup>22</sup> Տե՛ս OECD (2018), Education at a Glance 2018: OECD Indicators, OECD Publishing, Paris, էջ 280, <http://dx.doi.org/10.1787/eag-2018-en>:

<sup>23</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union, էջ 32, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna\\_internet\\_0.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna_internet_0.pdf):

թյուն՝ երկրների միջև արժանահավատ համեմատություն կատարելու համար, բայց միասին վերցրած՝ դրանք թույլ են տալիս վեր հանել երկրների միջև ընդհանրությունները և տարբերությունները:

Անդրադառնանք ՀՀ-ում բարձրագույն կրթության ֆինանսավորման վերոնշյալ ցուցանիշներին:

**ա) Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափը՝ որպես ընդհանուր պետական ծախսերի մասնաբաժին**

Պետական ընդհանուր ծախսերում բարձրագույն կրթության ֆինանսավորման մասնաբաժինը (տոկոսը) այն ցուցանիշն է, որը ցույց է տալիս կառավարության կողմից բարձրագույն կրթության ոլորտին տրվող առաջնահերթությունը՝ այլ ոլորտների համեմատությամբ: Այս ցուցանիշը հատկապես խոսում է պետական բյուջեի սահմանափակ հնարավորությունների կամ ընդհանուր պետական ծախսերի նվազման պայմաններում: Եթե նման իրավիճակում բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափն առնվազն պահպանվում է՝ չկրելով այլ ոլորտներին համարժեք կրճատումներ, ապա դա նշանակում է, որ պետության համար բարձրագույն կրթությունն ունի առաջնայնություն այլ ոլորտների համեմատ: Այն, իհարկե, նաև հստակ վեր է հանում պետության կողմից իր քաղաքացիների՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի ապահովման իր սահմանադրական պարտավորության կատարումը:

ՀՀ-ում բարձրագույն կրթությանը պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորումը տարիներ շարունակ ցածր է պետական բյուջեի ծախսային մասի 1%-ից: Մասնավորապես, բարձրագույն կրթության ոլորտի պետական ծախսերը 2019 թ. կազմել են 10,351,017.0 հազար դրամ կամ պետական բյուջեի ծախսերի ընդամենը 0.6%-ը<sup>24</sup>, ընդ որում՝ դրանք նվազել են 2015 թ. 11,529,490.6 հազար դրամից<sup>25</sup> կամ բյուջեի ծախսային մասի 0.88%-ից շուրջ 0.2%-ով: 2019 թ. պետական ծախսերի բացվածքը՝ ըստ բյուջետային ծրագրերի, ներկայացված է աղյուսակ 4-ում:

Ինչպես երևում է աղյուսակից, բարձրագույն կրթության ոլորտում պետական ծախսերի գերակշիռ մասը կազմում են նպաստի ձևով ուսման վարձավճարի փոխհատուցման և կրթաթոշակների ծախսերը: Ընդ որում, պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստանում է (սովորում են անվճար) ուսանողների ընդամենը շուրջ 16%-ը<sup>26</sup>:

Համեմատության համար այս ցուցանիշն ուսումնասիրվել է ԵԲԿՏ<sup>27</sup> և ՏՀԶԿ երկրներում:

<sup>24</sup> Տե՛ս «ՀՀ 2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2018 թ. նոյեմբերի 22-ին, էջ 118-119, <https://www.gov.am/files/docs/3124.pdf>:

<sup>25</sup> Տե՛ս «ՀՀ 2015 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2014 թ. դեկտեմբերի 4-ին, էջ 10, <https://www.gov.am/files/docs/1470.pdf>:

<sup>26</sup> Մանրամասն վերլուծությունը տրված է հոդվածի նախորդ մասում: Տե՛ս «Բանբեր ՀՊՏՀ», 2019, թիվ 4, Եր., «Տնտեսագետ» հրատ., էջ 119-141:

<sup>27</sup> Բոլոնիայի գործընթացի իրականացման վերաբերյալ 2018 թ. հաշվետվությունը վերջին հրապարակված հաշվետվությունն է, որում բերված են 2014 թ. տվյալները: Ավելի թարմ տվյալներ դեռևս չեն հրապարակվել:

Բոլոնիայի գործընթացի իրականացման վերաբերյալ 2018 թ. հաշվետվության մեջ բերված տվյալների համաձայն՝ **պեդագոգական ընդհանուր ծախսերում բարձրագույն կրթությանը հատկացված փարեկան ծախսերի մասնաբաժինը ԵԲԿՏ երկրների համար 2014 թ. կազմել է միջինում 2.8%, ինչը շուրջ 3.5 անգամ բարձր է ՀՀ 2014 թ. ցուցանիշից. վերջինս կազմել է պեդագոգական ընդհանուր ծախսերի շուրջ 0.8%-ը**<sup>28</sup>:

Աղյուսակ 4

**ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի պեդագոգական ծախսերը՝ ըստ բյուջեբային ծրագրերի, 2019 թ.**

N	Բյուջեբային ծրագրերի անվանումները	Գումարը (հազար դրամ)
1	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	47,259.50
2	Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	878,198.60
3	Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում	237,540.00
4	Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ	28,521.00
5	Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	8,312,200.30
6	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում	626,742.10
7	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	41,366.80
8	Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին	30,106.70
9	Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	54,500.00
10	Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին	94,582.00
<b>Ընդամենը՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրով</b>		<b>10,351,017.00</b>

Ընդ որում, բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափի ցուցանիշը ԵԲԿՏ երկրներում ամենաբարձրը Նորվեգիայում, Դանիայում և Շվեյցարիայում է՝ 2014 թ. կազմելով համապատասխանաբար պետական ընդհանուր ծախսերի 4.8%-ը, 4.2%-ը և 4%-ը, **իսկ ամենացածրը՝ Հայաստանում և Վրաստանում**<sup>29</sup>:

**ՏՀԶԿ երկրներում** 2016 թ. բարձրագույն կրթությանը հատկացված տարեկան ֆինանսավորումը միջինում կազմել է պետական ընդհանուր ծախսերի 2.9%-ը՝ ներառյալ գիտահետազոտական աշխատանքներին տրամադրված գումարները և 2.2%-ը՝ առանց գիտահետազոտական աշխատանքների հա-

<sup>28</sup> Բոլոնիայի գործընթացի իրականացման վերաբերյալ 2018 թ. հաշվետվության մեջ բերված տվյալները տարբերվում են «ՀՀ 2014 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում բերված տվյալներից (հոդված 2 և հոդված 7, էջ 1 և 7): Համաձայն ՀՀ օրենքի՝ 2014 թ. բարձրագույն կրթությանը հատկացված գումարը կազմել է 9,795,346.2 հազ. դրամ կամ պետական բյուջեի ծախսերի շուրջ 0.8%-ը:

<sup>29</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union, էջ 34-35, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna\\_internet\\_0.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna_internet_0.pdf):

մար հատկացվող գումարների<sup>30</sup>:

**Պետական ընդհանուր ծախսերում բարձրագույն կրթության ծախսերի մասնաբաժնի ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշը 2016 թ. շուրջ 2.5 անգամ գերազանցել է ՀՀ 2016 թ. ցուցանիշը. վերջինս կազմել է պետական ընդհանուր ծախսերի շուրջ 0.88%-ը<sup>31</sup>:**

**բ) Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս<sup>32</sup>**

Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս, այն ցուցանիշն է, որը սովորաբար բնութագրում է բարձրագույն կրթությանը պետության կողմից հատկացված ֆինանսական միջոցների ծավալները՝ ելնելով երկրի տնտեսության հարաբերական չափից և շատ օգտակար է համեմատական վերլուծությունների համար:

Ուստի, կատարվել է նաև այս ցուցանիշի համեմատական վերլուծություն ՀՀ-ի, ՏՀԶԿ և ԵԲԿՏ երկրների համար: Հարկ է նշել, որ այս ցուցանիշի հաշվարկում, որպես կանոն, ներառվում են պետական կառավարման թե՛ կենտրոնական, թե՛ տարածքային մարմինների կողմից կատարվող ծախսերը՝ ընդգրկելով բուհերին հատկացվող ուղղակի և անուղղակի ֆինանսավորումը: ՏՀԶԿ երկրներում բարձրագույն կրթությանը հատկացված պետական ֆինանսավորման տարեկան չափը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս, 2016 թ. կազմել է միջինում 1.5%<sup>33</sup>:

Բոլոնիայի գործընթացի իրականացման 2018 թ. հաշվետվության մեջ բերված տվյալների համաձայն՝ 2014 թ. ԵԲԿՏ երկրներում բարձրագույն կրթությանը հատկացված պետական ֆինանսավորման տարեկան չափը՝ որպես ՀՆԱ-ի տոկոս, կազմել է միջինում 1.22%: Միաժամանակ, հարկ է նշել, որ ԵԲԿՏ երկրների մեծամասնությունը բարձրագույն կրթությանը հատկացնում է ՀՆԱ-ի ավելի քան 1.2%-ը, իսկ ամենաբարձր ցուցանիշներն ունեն Դանիան (ՀՆԱ-ի 2.3%-ը), Նորվեգիան (ՀՆԱ-ի 2.2%-ը) և Ֆինլանդիան (ՀՆԱ-ի 2%-ը): Շվեդիան, Ուկրաինան, Ավստրիան, Նիդեռլանդները և Թուրքիան բարձրագույն կրթությանը հատկացնում են ՀՆԱ-ի ավելի քան 1.5%-ը:

**Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման տարեկան չափի՝ որպես ՀՆԱ-ի տոկոսի, ցուցանիշով ևս ՀՀ-ն ԵԲԿՏ 48 երկրների ցանկում գրավում է վերջին հորիզոնականը: 2014 թ. ՀՀ-ն բարձրագույն կրթությանը հատկացրել է ՀՆԱ-ի ընդամենը շուրջ 0.3%-ը,**

<sup>30</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, "Indicator C4. What is the Total Public Spending on Education?", OECD Publishing, Paris, էջ 311, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

<sup>31</sup> Համաձայն «ՀՀ 2016 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում բերված տվյալների (հոդված 2 և հոդված 7, էջեր 1 և 7)՝ 2016 թ. բարձրագույն կրթությանը հատկացված գումարը կազմել է 12,325,603.7 հազար դրամ կամ պետական բյուջեի ծախսերի շուրջ 0.88%-ը:

<sup>32</sup> Ցուցանիշի հաշվարկներում օգտագործվում է անվանական ՀՆԱ-ն:

<sup>33</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, "Indicator C2. What Proportion of National Wealth is Spent on Educational Institutions?", OECD Publishing, Paris, էջ 287, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

**ինչը 4 անգամ փոքր էր ԵԲԿՏ երկրների միջին ցուցանիշից<sup>34</sup>: Ավելին, 2019 թ. ՀՀ այս ցուցանիշը ավելի է նվազել՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 0.19%-ը:**

**ՀՀ նշված ցուցանիշը 2016 թ. 5 անգամ փոքր էր ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշից, իսկ 2019 թ. փվյալներով՝ շուրջ 7 անգամ:**

**գ) Մեկ ուսանողի վրա կատարվող տարեկան ծախսի չափը՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոս**

Մեկ ուսանողի վրա կատարվող տարեկան ծախսի չափը՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոս, այն ցուցանիշն է, որը ներառում է բարձրագույն կրթության վրա կատարվող թե՛ պետական, թե՛ մասնավոր ծախսերը: Ուստի, ի տարբերություն նախորդ 2 ցուցանիշների, այն արտացոլում է բարձրագույն կրթության վրա կատարվող ֆինանսական ներդրումների ընդհանուր ծավալը երկրում: Այն հաշվի է առնում նաև ուսանողների ընդհանուր թիվը երկրում<sup>35</sup> ցույց տալով ըստ ուսանողի կատարվող ծախսը, որը հաճախ արտահայտվում է գնողունակության համարժեքությամբ (PPP)՝ թույլ տալով բարձրագույն կրթության վրա կատարվող ծախսերի համեմատություն կատարել երկրների միջև<sup>36</sup>:

Մեկ ուսանողի վրա կատարվող տարեկան ծախսի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև, որպես կանոն, գոյություն ունի կոռելյացիոն կապ. բարձր եկամուտ ունեցող երկրներն ըստ ուսանողի ծախսում են ավելի մեծ գումար, քան ցածր եկամուտ ունեցողները: Սակայն այդ կապն ուղիղ համեմատական չէ. միանման եկամուտ ունեցող երկրների միջև նույնպես գոյություն ունեն նկատելի տարբերություններ:

ՏՀԶԿ երկրներում մեկ ուսանողի վրա կատարվող տարեկան ծախսը միջինում կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շուրջ 40%-ը: Սակայն որոշ երկրներում (ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորությունում (ՄԹ), Բրազիլիայում, Սլովակիայում, Շվեդիայում) մեկ ուսանողի վրա կատարվող ծախսը գերազանցում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 50%-ը<sup>37</sup>: Միևնույն ժամանակ, Նորվեգիան, որը ԵՄ և Նորդիկ (սկանդինավյան) երկրների մեջ ունի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ամենաբարձր ցուցանիշներից մեկը, ըստ ուսանողի ծախսում է ավելի քիչ գումար, քան օրինակ՝ ՄԹ-ն, Շվեդիան կամ Դանիան, որոնց մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ավելի ցածր է: Կարևոր է նաև նշել, որ վերջին տարիներ

<sup>34</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union. Էջ 32-33,

[https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna\\_internet\\_0.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna_internet_0.pdf):

<sup>35</sup> Այն երկրներում, որոնցում բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածությունը ցածր է, ըստ ուսանողի կարող են կատարել ավելի մեծ ծախսեր, քան այն երկրները, որոնցում ընդգրկվածությունը մեծ է:

<sup>36</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union. Էջ. 37,

[https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna\\_internet\\_0.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna_internet_0.pdf)

<sup>37</sup> Տե՛ս OECD (2018), Education at a Glance 2018: OECD Indicators, OECD Publishing, Paris, "Indicator C1. How Much Is Spent Per Student on Educational Institutions?", էջ 250, [https://read.oecd-ilibrary.org/education/education-at-a-glance-2018/indicator-c1-how-much-is-spent-per-student-on-educational-institutions\\_eag-2018-21-en#page6](https://read.oecd-ilibrary.org/education/education-at-a-glance-2018/indicator-c1-how-much-is-spent-per-student-on-educational-institutions_eag-2018-21-en#page6):

րին ըստ ուսանողի կատարվող տարեկան ծախսի ցուցանիշը ՏՀԶԿ երկրներում ունի կայուն աճի միտում: Այսպես, 2010-2015 թթ. ընթացքում ՏՀԶԿ երկրներում այն միջինում աճել է 12%-ով<sup>38</sup>:

ԵԲԿՏ երկրների մեծ մասում ևս արձանագրվել է ըստ ուսանողի վրա կատարվող ծախսերի աճ: Մասնավորապես, ըստ ուսանողի ծախսը՝ բացարձակ թվով (արտահայտված PPP-ով), ԵԲԿՏ երկրներում 2011-2014 թթ. ընթացքում աճել է 67%-ով, որը բացատրվում է բարձրագույն կրթության ոլորտում թե՛ մասնավոր, թե՛ պետական ծախսերի էական աճով: Ընդ որում, ԵԲԿՏ գրեթե բոլոր երկրները, թեև ունեն ՎՆԱ-ի տարբեր ցուցանիշներ, այնուհանդերձ, իրականացնում են բարձրագույն կրթության ծախսերի ավելացման նպատակային քաղաքականություն: Օրինակ, ինչպես նշվեց վերը, Նորդիկ երկրներում մեկ ուսանողի վրա կատարվող ծախսը մեկ շնչի հաշվով ՎՆԱ-ի 50%-ից ավելի է, ինչը բնական է ՎՆԱ-ի բարձր ցուցանիշներ ունեցող երկրների համար: Սակայն Սերբիան և Խորվաթիան, որոնք ունեն ՎՆԱ-ի ավելի ցածր ցուցանիշներ, ևս ըստ մեկ ուսանողի ծախսում են մեկ շնչի հաշվով ՎՆԱ-ի շուրջ 50%-ը:<sup>39</sup>

ՀՀ-ն նույնպես ԵԲԿՏ անդամ երկիր է, սակայն ըստ մեկ ուսանողի կատարվող տարեկան ծախսի չափի՝ որպես մեկ շնչի հաշվով ՎՆԱ-ի տոկոսի մասին հրապարակված տվյալները ՀՀ-ի համար բացակայում են: Ուստի, այս աշխատանքում կատարվել է այդ ցուցանիշի մոտավոր հաշվարկ 2018 թ. համար<sup>40</sup>:

Այսպես, ՀՀ պետական բյուջեից բարձրագույն կրթության ոլորտին հատկացված ընդհանուր գումարը 2018 թ. կազմել է 12,151,993.4 հազար դրամ<sup>41</sup>: Նշված գումարն ուղղվել է ՀՀ բուհերում անվճար հիմունքներով սովորողների (ներառյալ ասպիրանտների և դոկտորանտների), որոնք կազմել են սովորողների ընդհանուր թվաքանակի 17%-ը (14006 ուսանող)<sup>42</sup>, ուսման վարձաճարների փոխհատուցմանը և կրթաթոշակների վճարմանը: Ուստի, սովորողների 83%-ի (67486 ուսանողի) վարձավճարները և ուսման հետ կապված այլ ծախսերը կատարվել են մասնավոր (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ներդրումներով: Մոտավոր հաշվարկներով՝ բարձրագույն կրթության բոլոր 3 մակարդակների համար ուսման վարձավճարի միջին կշռված չափը կազմել է 563806 դրամ<sup>43</sup>:

<sup>38</sup> Տե՛ս նույն տեղը, էջ. 251:

<sup>39</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union, էջ 39,

[https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna\\_internet\\_0.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna_internet_0.pdf):

<sup>40</sup> Հաշվարկը կատարված է 2018 թ. կտրվածքով, քանի որ ամենավերջին պաշտոնական տվյալները հրապարակված են 2018 թ. համար:

<sup>41</sup> Տե՛ս «ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2017 թ. դեկտեմբերի 8-ին, էջ 64, <https://www.gov.am/files/docs/2575.pdf>:

<sup>42</sup> Տե՛ս «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ. և դինամիկ շարքեր (2014-2018)» վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2019, էջ 219-269 և 308-314, [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf):

<sup>43</sup> Ուսման վարձավճարի չափի միջին կշռված հաշվարկը կատարվել է ՀՀ քաղաքացիների համար սահմանված ուսման վարձավճարների չափերով՝ Գնահատման և թեստավորման կենտրոնի և առանձին բուհերից ստացված տվյալների հիման վրա:



Ելնելով ուսման վարձավճարի միջին կշռված հաշվարկային չափից, ՀՀ բուհերի անվճար և վճարովի հիմունքներով սովորողների թվաքանակներից՝ տրվել է բարձրագույն կրթության ոլորտում մասնավոր և պետական ոլորտի գումարային ծախսերի մոտավոր գնահատական 2018 թ. համար, ինչը կազմել է առնվազն 50.2 մլրդ դրամ, որից պետական ծախսերը կազմել են շուրջ 12.2 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 24%-ը, իսկ մասնավորինը՝ առնվազն 38 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 76%-ը<sup>44</sup>:

Հաշվի առնելով, որ 2018-2019 ուստարում սովորողների ընդհանուր թիվը բարձրագույն կրթության երեք մակարդակներում ՀՀ բուհերում կազմել է 81492,<sup>45</sup> ուստի, պետական և մասնավոր ոլորտի ընդհանուր ծախսը մեկ ուսանողի հաշվով կազմել է միջինում շուրջ 616000 դրամ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն<sup>46</sup> 2018 թ. ՀՀ-ում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է շուրջ 2.022 մլն դրամ (4188 ԱՄՆ դոլար):

***Այսպիսով, մոտավոր գնահատականներով՝ ՀՀ-ում մեկ ուսանողի հաշվով կատարված փարեկան ծախսի չափը՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոս, 2018 թ. կազմել է շուրջ 30.5%:***

***ՀՀ այս ցուցանիշը 19.5-20%-ով փոքր է ՏՀԶԿ և ԵԲԿՏ երկրների միջին ցուցանիշներից:***

Բարձրագույն կրթության ոլորտում պետական և մասնավոր ծախսերի համամասնության առումով ՀՀ-ում պատկերը կտրուկ տարբերվում է թե՛ ԵՄ, թե՛ ՏՀԶԿ երկրների պատկերից:

Մասնավորապես, ՏՀԶԿ երկրներում բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերի միջինում շուրջ 74%-ը կազմում են պետական և 26%-ը՝ մասնավոր և միջազգային աղբյուրներից ստացված ծախսերը: ԵՄ երկրներում բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերի միջինում շուրջ 77%-ը կազմում են պետական և 23%-ը՝ մասնավոր և միջազգային աղբյուրներից ստացված ծախսերը<sup>47</sup>:

Մինչդեռ, ՀՀ-ում մասնավոր և պետական ծախսերի համամասնությունը ծայրահեղ հակադիր է. բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերի շուրջ 76%-ը կազմում են մասնավոր և ընդամենը 24%-ը՝ պետական ծախսերը:

***Այսպիսով, ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերում պետական ծախսերի մասնաբաժինը շուրջ 3 անգամ ավելի փոքր է, քան ԵՄ և ՏՀԶԿ երկրներում:***

<sup>44</sup> Մասնավոր ծախսերի հաշվարկները չեն ներառում ընտանիքների՝ իրենց ուսանող-երեխաների ուսման հետ կապված այն ծախսերը, որոնք կատարվում են ի լրումն ուսման վարձավճարի, մինչդեռ, պետական ծախսերը ներառում են նաև պետական բյուջեից վճարվող ուսանողական կրթաթոշակները: Ուստի, գործածված է «առնվազն» բառը:

<sup>45</sup> Տե՛ս «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ. և դինամիկ շարքեր (2014-2018)» վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2019, [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf):

<sup>46</sup> Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019», Ազգային հաշիվների համակարգ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 236, <https://www.armstat.am/file/doc/99516783.pdf>:

<sup>47</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, OECD Publishing, Paris, "Indicator C3. How Much Public and Private Investment in Educational Institutions is There?" էջ 300, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

Մեկ ուսանողի համար կատարվող տարեկան ծախսի չափի՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոսի, փոփոխությունները պայմանավորված են ըստ ուսանողի կատարվող պետական ծախսի և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոփոխություններով: Օրինակ, հաստատուն պետական ծախսերի կամ դրանց նվազման պարագայում, ըստ ուսանողի տարեկան ծախսը կարող է աճել, եթե աճեն մասնավորի ծախսերը: Նման իրավիճակ է, օրինակ, ՄԹ-ում<sup>48</sup>:

**ՀՀ-մ ևս ըստ ուսանողի տարեկան ծախսի չափի՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոսի, 30.5%-ի ցուցանիշը պայմանավորված է հիմնականում մասնավոր ծախսերի բարձր մասնաբաժնով:**

#### **Եզրահանգումներ**

- Բարձրագույն կրթության ոլորտի պետական ծախսերը ՀՀ-ում 2019 թ. կազմել են պետական բյուջեի ծախսերի ընդամենը 0.6%-ը՝ 2015 թ. համեմատ նվազելով 0.2%-ով և 2015-2019 թթ. ընթացքում տատանվելով 0.6%-ից 0.88%-ի շրջանում:
- Պետական ընդհանուր ծախսերում բարձրագույն կրթությանը հատկացվող տարեկան ծախսերի մասնաբաժնի (տոկոսի) ցուցանիշը ՀՀ-ի համար շուրջ 3.5 անգամ փոքր է ԵԲԿՏ և 2.5 անգամ՝ ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշից:
- 2019 թ. ՀՀ-ում բարձրագույն կրթությանը հատկացված պետական ֆինանսավորման տարեկան չափը կազմել է ՀՆԱ-ի շուրջ 0.19%-ը: ՀՀ այս ցուցանիշը 2014 թ. 4 անգամ ավելի փոքր էր ԵԲԿՏ երկրների, իսկ 2016 թ.՝ 5 անգամ ավելի փոքր ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշից: 2019 թ. տվյալներով՝ ՀՀ այս ցուցանիշը շուրջ 7 անգամ փոքրացել է ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշից:
- Մոտավոր գնահատականներով՝ ՀՀ-ում մեկ ուսանողի հաշվով կատարվող տարեկան ծախսի չափը՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոս, կազմում է 30.5%: Այս ցուցանիշը 19.5-20%-ով փոքր է ՏՀԶԿ և ԵԲԿՏ երկրների միջին ցուցանիշներից:
- Բարձրագույն կրթության ոլորտում մասնավոր և պետական ծախսերի համամասնությունը ՀՀ-ում բնեռային հակադիր է ԵԲԿՏ և ՏՀԶԿ երկրներում ծախսերի համամասնությանը: Մոտավոր հաշվարկով, ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերի 76%-ը կազմում են մասնավորի և ընդամենը 24%-ը՝ պետական ծախսերը: Մինչդեռ, ՏՀԶԿ և ԵԲԿՏ երկրներում պետական ծախսերը կազմում են բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր ծախսերի 74%-77%-ը, իսկ մասնավորի ծախսերը՝ 23%-26%-ը:
- ՀՀ-ում բարձրագույն կրթության ընդհանուր ծախսերում պետական ծախսերի մասնաբաժինը շուրջ 3 անգամ ավելի փոքր է, քան ԵՄ և ԵԲԿՏ երկրներում:
- Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման չափը ՀՀ-ում շատ փոքր է ցանկացած համեմատությամբ, ինչը

<sup>48</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union. էջ 39, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna\\_internet\\_0.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna_internet_0.pdf):

վկայում է այն մասին, որ բարձրագույն կրթությունը պետության համար գերակա ոլորտ չի հանդիսանում:

### **6. Ուսման վարձաճարի չափը և սոցիալական խմբերին ուղղվող պետական աջակցությունը ՀՀ-ում**

Ակնհայտ է, որ մուտքը բարձրագույն կրթություն ուսանողների և նրանց ընտանիքների համար կապված է բավականին մեծ ծախսերի հետ: Ավելին, բուհ ընդունելությունը դեռևս չի ապահովում ուսանողների հետագա առաջընթացը և ուսումնական հաջողությունները, մանավանդ որ ուսումնառությունը ևս կապված է բավականին մեծ ծախսերի հետ: Ուստի, երկրները որդեգրում են տարբեր քաղաքականություններ՝ ուսման վարձավճարը փոխհատուցելու և ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանն աջակցելու հարցերում:

Սույն հոդվածում ուսումնասիրվել են նաև ՀՀ-ում ուսման վարձավճարի չափին և ուսանողների աջակցման քաղաքականությանը վերաբերող հարցերը և կատարվել է դրանց համեմատական վերլուծություն:

Ուսման վարձավճարի չափը ՀՀ-ում, ինչպես և այլ երկրներում, խիստ տարբեր է և կախված է բուհի տեղակայումից (ք. Երևան կամ մարզեր), բուհի հիմնադրից և կազմակերպարարական ձևից (պետական, մասնավոր, միջպետական և այլն), բարձրագույն կրթության աստիճանից (բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա) և մասնագիտությունից:

Ուստի, ուսման վարձավճարի չափին վերաբերող ուսումնասիրություններում երկրները համեմատելու համար հաճախ կատարվում է դրա նվազագույն և առավելագույն չափերի պարզ համադրում: Սակայն այս մոտեցումը թույլ չի տալիս պատասխանելու մի շարք հարցերի. թա՞նկ է արդյոք բարձրագույն կրթությունը տվյալ երկրում, որքանո՞վ է այն մատչելի ուսանողների ու նրանց ընտանիքների համար և նրանց եկամուտների կամ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ո՞ր տոկոսն է կազմում վարձավճարը: Այդ իսկ պատճառով երկրների միջև համեմատություն կատարելու և նշված հարցերին պատասխանելու համար ուսման վարձավճարի չափը, ամենից հաճախ, համադրվում է ըստ շնչի հաշվով ՀՆԱ-ի հետ և կիրառվում է **ուսման վարձավճարի տարեկան չափը՝ որպես մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի տոկոս** ցուցանիշը:

Ուսման վարձավճարի տարեկան չափը 2019-2020 ուստարում ՀՀ-ում տատանվել է նվազագույնը 140000 դրամից (Վարդենիսի մանկավարժական ինստիտուտում «Պատմություն», «Մասնագիտական մանկավարժություն», «Հայոց լեզու և գրականություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»)՝ բակալավրի ծրագրերի համար<sup>49</sup> և մինչև 2250000 դրամ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում՝ «Բիզնես» բակալավրի ծրագրի համար<sup>50</sup>:

<sup>49</sup> Տե՛ս Գնահատման և թեստավորման կենտրոն, «ՀՀ բուհերի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով 2019/2020 ուսումնական տարվա ընդունելության քննությունների, տեղերի և վարձաչափերի ցանկ», [http://www.atc.am/files/2019\\_dimord/lavash.pdf](http://www.atc.am/files/2019_dimord/lavash.pdf):

<sup>50</sup> Տե՛ս Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), <https://admissions.aua.am/undergraduate/tuition-and-fees/>:

**Այսպիսով, տարեկան ուսման վարձավճարի առավելագույն չափը ՀՀ-ում 16 անգամ ավելի բարձր է նվազագույն չափից<sup>51</sup>, ինչը բավականին արտասովոր է այլ երկրների համեմատությամբ:**

ՏՀԶԿ երկրների շուրջ կեսում ուսման վարձավճարի չափը պետական բուհերում միասնական է իրենց քաղաքացիների համար և չի տարբերվում՝ կախված բուհից կամ մասնագիտությունից, իսկ մյուս կեսում վարձավճարի առավելագույն չափը նվազագույնից մեծ է 1.5-ից 6 անգամ: Բացառություն են կազմում մեկ-երկու երկիր, օրինակ՝ Իսպանիան, որտեղ վարձավճարի առավելագույն չափը նվազագույնից մեծ է շուրջ 12 անգամ՝ տատանվելով 1000-ից 12000 ԱՄՆ դոլարի շրջանում (արտահայտված PPP-ով)<sup>52</sup>:

ՀՀ-ում ուսման վարձավճարի չափի թվաբանական միջինը կազմում է 1195000 դրամ: Սակայն ճշգրտության համար անհրաժեշտ է հաշվարկել ուսման վարձի չափի միջին կշռված արժեքը, ինչը հաշվի է առնում տարբեր չափերի վարձ վճարող ուսանողների իրական թվաքանակը (թե քանի ուսանող որքան է վճարում):

**2019-2020 ուստարում ՀՀ պետական և միջպետական բուհերի բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողների համար<sup>53</sup> ուսման վարձավճարի միջին կշռված չափը կազմել է 623300 դրամ, իսկ հանրապետության բոլոր՝ ներառյալ մասնավոր բուհերի համար՝ 557500 դրամ<sup>54</sup>:**

Հարկ է նշել, որ, որպես օրինաչափություն, ՀՀ-ում ուսման վարձավճարի չափը մասնավոր բուհերում ավելի փոքր է, քան պետական և միջպետական բուհերում, իսկ պետական բուհերում այն ավելի փոքր է, քան միջպետականներում: Մինչդեռ, այլ երկրներում իրավիճակը հիմնականում հակառակն է՝ մասնավոր բուհերում վարձավճարի չափն ավելի բարձր է, քան պետական բուհերում:

Հասկանալու համար, թե արդյոք ՀՀ-ում ուսման վարձավճարի չափն այլ երկրների համեմատությամբ բարձր է, թե ցածր, այն համադրվել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հետ:

Ինչպես նշվեց վերը, 2018 թ. ՀՀ-ում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 2.022 մլն դրամ (4188 ԱՄՆ դոլար<sup>55</sup>), իսկ 2019 թ., Արժույթի միջազգային

<sup>51</sup> Ուսման վարձավճարի համեմատություններում ներառված չեն արտասահմանցի ուսանողների համար սահմանված վճարաչափերը, որոնք զգալիորեն բարձր են, քանի որ այս աշխատանքում քննարկվում է բարձրագույն կրթության ոլորտում պետության սոցիալական քաղաքականությունը ՀՀ քաղաքացիների համար:

<sup>52</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, “Indicator C5. How Much Do Tertiary Students Pay and What Public Support Do They Receive?”, OECD Publishing, Paris, էջ 317, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

<sup>53</sup> Հաշվարկները կատարված են 2019-2020 ուստարվա բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողների համար սահմանված ուսման վճարաչափերով, քանի որ դրանք ամենավերջին տվյալներն են (յուրաքանչյուր տարի ուսման վճարաչափերը փոփոխվել են):

<sup>54</sup> Հաշվարկի համար տվյալները վերցված են Գնահատման և թեստավորման կենտրոնի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի և այլ բուհերի պաշտոնական կայքերից, տե՛ս [http://www.atc.am/files/2019\\_dimord/lavash.pdf](http://www.atc.am/files/2019_dimord/lavash.pdf), <https://admissions.aua.am/undergraduate/tuition-and-fees/>, <https://ufar.am/hy/admission/frais-descolarit.html>:

<sup>55</sup> Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019», Ազգային հաշիվների համակարգ, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջ 236, <https://www.armstat.am/file/doc/99516783.pdf>:

հիմնադրամի (IMF) տվյալներով, այն կազմել է 4530 ԱՄՆ դոլար կամ շուրջ 2.176 մլն դրամ:

**Այսպիսով, 2019 թ. ուսման վարձավճարի փարեկան չափը ՀՀ բուհերի բակալավրիատը ընդունվածների համար փարտանվել է նվազագույնը՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 6.4%-ից մինչև առավելագույնը՝ 103%: Ուսման վարձավճարի փարեկան չափի միջին կշռված արժեքը պետական և միջպետական բուհերի համար կազմել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 28.6%-ը, իսկ ՀՀ բոլոր բուհերի համար (ներառյալ մասնավոր բուհերը)՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 25.6%-ը:**

Տարբեր կազմակերպությունների կողմից կատարված հետազոտություններում (ՏՀԶԿ<sup>56</sup>, Եվրոպական հանձնաժողով<sup>57</sup>) երկրները դասակարգված են 4 հիմնական խմբերի՝ հետևյալ 3 չափանիշի համակցությամբ՝ ուսման վարձավճարի չափ, ուսման վարձ վճարող ուսանողների մասնաբաժին և սոցիալական օգնության նպատակով ֆինանսական աջակցություն ստացող ուսանողների մասնաբաժին<sup>58</sup>: Ընդ որում, ֆինանսական աջակցության գործիքները շատ տարբեր են՝ ուսանողական կրթաթոշակներ, դրամաշնորհներ և վարկեր, ուսանողներին և նրանց ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության տարատեսակ գործիքներ (ուսանողական նպաստներ, ընտանեկան նպաստներ, հարկային արտոնություններ և այլն): Այս 3 չափանիշների համադրմամբ կատարված համեմատությունները թույլ են տալիս դատել բարձրագույն կրթության ոլորտում պետության սոցիալական քաղաքականության մասին:

Երկրների՝ ստորև բերված խմբավորումը և նրանց միջև համեմատությունը հիմնված է բացառապես պետական բուհերում սովորող և տվյալ երկրի քաղաքացի հանդիսացող բակալավրիատի ուսանողների տվյալների վրա:

**1. Առաջին խումբը կազմում են այն երկրները, որոնցում ուսման վարձավճարներ չկան կամ դրանց չափը շատ փոքր է, միաժամանակ գործում են ուսանողների աջակցության զարգացած համակարգեր (աջակցություն ստացող ուսանողները կազմում են մեծամասնություն):**

1-ին խմբում են Նորդիկ երկրները՝ Դանիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Նորվեգիան, ինչպես նաև Մալթան և Լյուքսեմբուրգը: Այս երկրներում ուսման վարձավճարները բացակայում են, բացառությամբ Լյուքսեմբուրգի, որում այն տատանվում է 400-800 եվրոյի շրջանում՝ կազմելով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 0,1%-ը:

Բացի դրանից, ուսանողների գերակշիռ մասը՝ 50%-ից ավելին (Դանիայում՝ 89%-ը, Ֆինլանդիայում՝ 69%-ը, Շվեդիայում՝ 88%-ը, Նորվեգիայում՝ 50%-ը, Մալթայում՝ 92.7%-ը, Լյուքսեմբուրգում՝ 71.5%-ը), ստանում է պետա-

<sup>56</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, "Indicator C5. How Much do Tertiary Students Pay and What Public Support Do They Receive?", OECD Publishing, Paris, էջ 314-331, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

<sup>57</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. National Student Fee and Support Systems in European Higher Education – 2018/19. Eurydice – Facts and Figures. Luxembourg: Publications Office of the European Union, էջ. 29-32, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee\\_support\\_2018\\_19\\_report\\_en.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee_support_2018_19_report_en.pdf):

<sup>58</sup> Երկրների խմբավորումը կատարված է 2017-2018 և 2018-2019 ուսումնական տարիների տվյալներով:

կան նպաստներ և դրամաշնորհներ՝ ուղղված կեցության և ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցմանը, որոնց ամսական չափը սովորաբար որոշվում է՝ ելնելով ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակից<sup>59</sup>:

Նման քաղաքականությունն ապահովում է բարձրագույն կրթության մեջ բարձր ընդգրկվածություն (որն այս խմբի երկրների համար կազմում է միջինում 82.4%) և հավասար մատչելիություն հասարակության բոլոր խավերի համար (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

1-ին խմբի երկրների ցուցանիշները, 2017 թ./2018 թ.

Երկիր	Համախառն ընդգրկվածություն <sup>60</sup>	Միջին տարեկան վարձավճար <sup>61</sup>	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար), 2018 թ. <sup>62</sup>	Միջին տարեկան վարձավճար (% մեկ շնչի հաշվով ՀՆԱ)
Դանիա	81%	0	52280	0%
Ֆինլանդիա	88%	0	46600	0%
Շվեդիա	67%	0	53650	0%
Նորվեգիա	82%	0	74360	0%
Մալթա	49%	0	45160	0%
Լյուքսեմբուրգ	94% <sup>63</sup>	400-800 եվրո <sup>64</sup>	106370	0.4%-0.8%
<b>Միջին</b>	<b>82.4%</b>		<b>63070</b>	<b>0-0.1%</b>

**2. Երկրորդ խումբը կազմում են այն երկրները, որոնցում ուսման վարձավճարները նույնպես բացակայում են կամ դրանց չափերը փոքր են, բայց ուսանողների աջակցության համակարգերը համեմատաբար ավելի քիչ են զարգացած (աջակցություն ստացող ուսանողները մեծամասնություն չեն կազմում):**

2-րդ խմբում ներառված են գրեթե բոլոր եվրոպական երկրները, որոնք ընդգրկված չեն 1-ին խմբում: Այս խմբի երկրների մի մասում (Հունաստան, Կիպրոս, Թուրքիա, Չեխիա, Գերմանիա, Էստոնիա, Խորվաթիա, Ավստրիա, Լեհաստան, Սլովենիա, Սլովակիա, Չեռնոգորիա, ՄԹ-ից՝ Շոտլանդիա) ու-

<sup>59</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. National Student Fee and Support Systems in European Higher Education – 2018/19. Eurydice – Facts and Figures. Luxembourg: Publications Office of the European Union, էջ 39-80, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee\\_support\\_2018\\_19\\_report\\_en.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee_support_2018_19_report_en.pdf):

<sup>60</sup> Տե՛ս The World Bank data, School enrollment, tertiary (% gross), <https://data.worldbank.org/indicator/SE.TER.ENRR>:

<sup>61</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, "Indicator C5. How Much Do Tertiary Students Pay and What Public Support Do They Receive?", OECD Publishing, Paris, էջ 327, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

<sup>62</sup> Տե՛ս "World Economic Outlook - GDP Per Capita". International Monetary Fund. 2019, <https://www.imf.org/external/datamapper/PPPPC@WEO/OEMDC/ADVEC/WEOWORLD/CAN>:

<sup>63</sup> Լյուքսեմբուրգի ուսանողների 19%-ը սովորում է Լյուքսեմբուրգի համալսարանում, իսկ 75%-ը՝ այլ երկրների բուհերում, սովյալները բերված են OECD (2019), Education at a Glance 2019: Country Note, Luxembourg, էջ 2, տե՛ս [https://www.oecd.org/education/education-at-a-glance/EAG2019\\_CN\\_LUX.pdf](https://www.oecd.org/education/education-at-a-glance/EAG2019_CN_LUX.pdf):

<sup>64</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. National Student Fee and Support Systems in European Higher Education – 2018/19. Eurydice – Facts and Figures. Luxembourg: Publications Office of the European Union, էջ 55, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee\\_support\\_2018\\_19\\_report\\_en.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee_support_2018_19_report_en.pdf):

ման վարձավճարները, ըստ էության, բացակայում են (կարող է լինել մինչև 100 եվրո միանվագ վարչական վճար): Երկրների մյուս մասում (Ֆրանսիա, Հյուսիսային Մակեդոնիա, Սերբիա, Լիխտենշտեյն, Իսլանդիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ալբանիա, Պորտուգալիա, Նիդեռլանդներ, Հունգարիա, Իսպանիա, Իտալիա, Բուլղարիա, Բելգիա) դրանց առավելագույն չափը փոքր է 2600 ԱՄՆ դոլարից, և միաժամանակ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների և խոցելի խմբերի ուսանողները հիմնականում ազատվում են վարձավճարից: Այս խմբում կան նաև երկրներ, որոնցում վճարում են միայն ցածր առաջադիմություն ցուցաբերող ուսանողները (ուսանողների մինչև 25%-ը):

2-րդ խմբի երկրներում պետական ֆինանսական աջակցություն ստանում է ուսանողների մինչև 40%-ը, ինչը զգալիորեն փոքր է առաջին խմբի երկրների ցուցանիշներից: Սակայն բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածությունն այս խմբի երկրներում ևս բարձր է՝ միջինում շուրջ 71.5%<sup>65</sup>, քանի որ ուսման վարձավճարները փոքր են կամ լիովին բացակայում են: Ավելին, սոցիալապես անապահով ընտանիքների և խոցելի խմբերի ուսանողներն ազատվում են վարձավճարից կամ ստանում են ուղղորդված ֆինանսական աջակցություն: Արդյունքում, նաև հավասար մատչելիություն է ապահովվում հասարակության բոլոր խավերի համար:

**3. Երրորդ խումբը կազմում են այն երկրները, որոնցում ուսման վարձավճարները բարձր են, և վճարում է ուսանողների մեծամասնությունը, բայց գործում են ուսանողների աջակցության զարգացած համակարգեր (աջակցություն ստացող ուսանողները կազմում են մեծամասնություն):**

3-րդ խմբում ներառված են ՄԹ-ն (Անգլիան, Հյուսիսային Իռլանդիան, Ուելսը), Ավստրալիան, Նոր Զելանդիան, Կանադան, ԱՄՆ-ը: Այս երկրներում ուսման վարձավճարի չափը գերազանցում է 4500 ԱՄՆ դոլարը՝ հասնելով մինչև 12000-13000 ԱՄՆ դոլարի, սակայն ուսանողների գերակշիռ մասը՝ Կանադայում 70%-ից, իսկ մյուս երկրներում 85%-ից ավելին, ֆինանսական աջակցություն է ստանում պետական դրամաշնորհների, ուսանողական վարկերի տեսքով (արտոնյալ պայմաններով) կամ այդ երկուսի համադրությամբ:

Մոտ է այս խմբի երկրներին նաև Իսրայելը, որտեղ վարձավճարի չափը միջինում շուրջ 3200 ԱՄՆ դոլար է, բայց ուսանողների 75%-ը ֆինանսական աջակցություն է ստանում պետության կողմից:

Թեև ուսման վարձավճարները 3-րդ խմբի երկրներում բավականին բարձր են՝ տատանվելով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 9.4%-ից 25.3%-ի միջև՝ միջինում կազմելով 14.3%, բայց լայնածավալ պետական ֆինանսական աջակցության և զարգացած կառուցակարգերի արդյունքում ուսանողների ընդգրկվածությունը կրկին շատ բարձր է՝ կազմելով միջինում 82.4% (աղյուսակ 6):

3-րդ խմբի երկրների փորձը ցույց է տալիս, որ ուսանողների պետական աջակցության գործուն կառուցակարգերը կարող են հակակշիռ դառնալ ուսման բարձր վարձավճարներին՝ ապահովելով բարձրագույն կրթության մեջ հավասար ընդգրկվածություն հասարակության բոլոր խավերի համար:

<sup>65</sup> Տե՛ս UNESCO Institute for Statistics; <http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=144>:

Աղյուսակ 6

3-րդ խմբի երկրների ցուցանիշները, 2017 թ./2018 թ.

Երկիր	Համախառն ընդգրկվածություն <sup>66</sup>	Միջին տարեկան վարձավճար (ԱՄՆ դոլար) <sup>67</sup>	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար), 2018 թ. <sup>68</sup>	Միջին տարեկան վարձավճար (% մեկ շնչի հաշվով ՀՆԱ)
Ավստրալիա	113%	5034	52380	9.4%
Նոր Զելանդիա	82%	4487	40100	10.9%
Կանադա	69%	5286	49690	10.4%
ԱՄՆ	88%	8804	62870	13.5%
ՄԹ	60%	11866	45740	25.3%
<b>Միջին</b>	<b>82.4%</b>	<b>7095.4</b>	<b>50156</b>	<b>14.3%</b>

4. Չորրորդ խումբը կազմում են այն երկրները, որոնցում ուսման վարձավճարները բարձր են, և վճարում է ուսանողների մեծամասնությունը, իսկ ուսանողների աջակցության համակարգերը համեմատաբար թույլ են զարգացած (աջակցություն ստացող ուսանողների մասնաբաժինը մեծ չէ):

4-րդ խմբում ներառված են Ճապոնիան, Հարավային Կորեան և Չիլին: Այս երկրներում ուսման վարձավճարի չափերը 4800 ԱՄՆ դոլարից բարձր են՝ հասնելով մինչև 10400 ԱՄՆ դոլարի: Դրանցում ֆինանսական աջակցություն ստանում է ուսանողների անհամեմատ ավելի փոքր մասնաբաժինը՝ միջինում շուրջ 35%-ը, սակայն այն թիրախավորված է ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ուսանողներին: Արդյունքում, ապահովվում է 80%-ից բարձր ընդգրկվածություն (միջինում 87.3%), և սոցիալական արդարության խնդիրը հիմնականում լուծվում է (աղյուսակ 7):

Աղյուսակ 7

4-րդ խմբի երկրների ցուցանիշները, 2017 թ./2018 թ.

Երկիր	Համախառն ընդգրկվածություն <sup>69</sup>	Միջին տարեկան վարձավճար (ԱՄՆ դոլար) <sup>70</sup>	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար), 2018 թ. <sup>71</sup>	Միջին տարեկան վարձավճար (% մեկ շնչի հաշվով ՀՆԱ)
Ճապոնիա <sup>72</sup>	80%	5234	44250	11.8%
Կորեա	94%	4886	43290	11.3%
Չիլի	88%	7524	25700	29.3%
<b>Միջին</b>	<b>87.3%</b>	<b>5881</b>	<b>37747</b>	<b>17.5%</b>

<sup>66</sup> Տե՛ս The World Bank data, School enrollment, tertiary (% gross), <https://data.worldbank.org/indicator/SE.TER.ENRR>:

<sup>67</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, "Indicator C5. How Much Do Tertiary Students Pay and What Public Support Do They Receive?", OECD Publishing, Paris, էջ 327, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

<sup>68</sup> Տե՛ս "World Economic Outlook - GDP Per Capita". International Monetary Fund. 2019. <https://www.imf.org/external/datamapper/PPPPEC@WEO/OEMDC/ADVEC/WEOWORLD>:

<sup>69</sup> Տե՛ս The World Bank data, School enrollment, tertiary (% gross), <https://data.worldbank.org/indicator/SE.TER.ENRR>:

<sup>70</sup> Տե՛ս OECD (2019), Education at a Glance 2019: OECD Indicators, "Indicator C5. How Much Do Tertiary Students Pay and What Public Support Do They Receive?", OECD Publishing, Paris, էջ 327, <https://doi.org/10.1787/f8d7880d-en>:

<sup>71</sup> Տե՛ս "World Economic Outlook - GDP Per Capita". International Monetary Fund. 2019. <https://www.imf.org/external/datamapper/PPPPEC@WEO/OEMDC/ADVEC/WEOWORLD>:

<sup>72</sup> Տե՛ս "Overview of the Ministry of Education, Culture, Sports, Science and Technology", MEXT. էջ 29, [https://www.mext.go.jp/en/about/publication/\\_icsFiles/afieldfile/2019/03/13/1374478\\_001.pdf](https://www.mext.go.jp/en/about/publication/_icsFiles/afieldfile/2019/03/13/1374478_001.pdf):



Որևէ խմբում դժվար է հստակորեն դասակարգել Շվեյցարիան, Ռումինիան, Լիտվան, Լատվիան և Իռլանդիան, որոնցում իրավիճակը մի փոքր այլ է: Այս երկրներում ուսման վարձավճարի չափը տատանվում է ըստ բուհերի և մասնագիտությունների՝ հասնելով առավելագույնը մինչև 5500-6000 եվրո՝ Իռլանդիայում, Լատվիայում ու Ռումինիայում, մինչև 3450 եվրո՝ Շվեյցարիայում և 11750 եվրո՝ Լիտվայում: Բայց Լատվիայում, Լիտվայում և Ռումինիայում ուսանողների գերակշիռ մասը՝ 63-65%-ը, սովորում է անվճար, բացի դրանից, շուրջ 10-25%-ը ֆինանսական աջակցություն է ստանում կարիքավորության չափանիշներով: Իռլանդիայում բոլոր ուսանողները վճարում են 3000 եվրո պարտադիր գումար, իսկ 57%-ը՝ նաև 3000 եվրո ուսման վարձավճար: Շվեյցարիայում բոլոր ուսանողները վճարում են վարձավճար, որը տատանվում է 862-ից 3449 եվրոյի սահմաններում, իսկ կարիքավորության չափանիշներով աջակցություն է ստանում ուսանողների շուրջ 7%-ը<sup>73</sup>:

**Այսպիսով, վարձագույն ցուցանիշները (բացառությամբ ընդգրկվածության ցուցանիշի) բոլոր չորս խմբերի մեջ ունեն 4-րդ խմբի երկրները:**

Կարևոր է հասկանալ, թե ՀՀ-ն որ խմբի երկրների շարքում կարող է դասակարգվել: Այդ նպատակով, բացի ուսման վարձավճարի տարեկան չափի հաշվարկներից, ուսումնասիրվել են նաև պետության կողմից աջակցություն ստացող ուսանողների խմբերը և թվաքանակները:

ՀՀ-ում պետական բյուջեից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում է տրամադրվում հետևյալ սոցիալական խմբերի ուսանողներին<sup>74</sup>

1. առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց,
2. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց,
3. ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին,
4. զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին,
5. 2 և ավելի երեխա ունեցող ուսանողներին<sup>75</sup>:

Բացի դրանից, պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է ոչ սոցիալական չափանիշով<sup>76</sup>

<sup>73</sup> Տե՛ս European Commission/EACEA/Eurydice, 2018. National Student Fee and Support Systems in European Higher Education – 2018/19. Eurydice – Facts and Figures. Luxembourg: Publications Office of the European Union, էջ 39-80, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee\\_support\\_2018\\_19\\_report\\_en.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee_support_2018_19_report_en.pdf):

<sup>74</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգ», 2-րդ կետ:

<sup>75</sup> Այս խումբը ներառված չէ ՀՀ Կառավարության որոշման մեջ, բայց դրանում ներառված ուսանողները ևս ստանում են ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում:

<sup>76</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգ», 2-րդ կետ և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 4-րդ մաս:

- առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին,
- մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով:

Պետությունը ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում է տրամադրում նաև հետևյալ խմբերի ուսանողներին<sup>77</sup>

- «Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում» հաշվառված՝ անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50-100%-ի չափով,
- սահմանամերձ բնակավայրերի ուսանողներին,
- 2016 թ. ապրիլյան պատերազմի (ապրիլի 2-6) ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ուսանողներին<sup>78</sup>:

2019 թ. պետության կողմից աջակցություն ստացած ուսանողների թվաքանակի և փոխհատուցված գումարի մասին տեղեկությունը բերված է աղյուսակ 8-ում<sup>79</sup>:

**Այսպիսով, ՀՀ-ում 2019 թ. ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով պետության կողմից աջակցություն է ստացել սոցիալապես անապահով և փարբեր խոցելի խմբերի թվով 4071 ուսանող կամ ուսանողների շուրջ 5%-ը, իսկ հատկացված գումարը կազմել է 959.8 մլն դրամ:**

**Կատարված վերլուծության համաձայն՝ ՀՀ-ն վերոնշյալ 3 չափանիշի համակցությամբ առավել մոտ է 4-րդ խմբի երկրներին: Սակայն թե՛ ուսման վարձավճարի չափի, թե՛ սոցիալապես անապահով և խոցելի խմբերից աջակցություն ստացող ուսանողների թվաքանակի ՀՀ ցուցանիշները նկատելիորեն զիջում են նույնիսկ 4-րդ խմբի երկրների ցուցանիշներին:**

Մասնավորապես, ՀՀ-ում վարձավճարի տարեկան չափը կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 25.6%-ը, ինչը 8.1%-ով մեծ է 4-րդ խմբի երկրների միջին ցուցանիշից, իսկ պետական աջակցություն ստացող ուսանողների մասնաբաժինը կազմում է ուսանողների շուրջ 5%-ը, ինչը 30%-ով փոքր է այդ խմբի երկրների միջին ցուցանիշից:

Վերջապես պետք է նշել, որ ՀՀ-ում ուսանողներին սոցիալական աջակցություն տրամադրելու պատասխանատվությունը կրում են նաև բուհերը: Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ բուհերը պարտավոր են ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրել վճարովի համակարգում սովորող իրենց ուսանողական համակազմի առնվազն 10%-ին՝ ուսանողների վարձավճարներից

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղը, 2.1 և 2.5 կետեր և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 4-րդ մաս:

<sup>78</sup> Այս խումբը ներառված չէ ՀՀ Կառավարության որոշման մեջ, բայց դրանում ներառված ուսանողները ևս ստանում են ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում:

<sup>79</sup> Տվյալները ստացված են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից:

գոյացած գումարի առնվազն 7%-ի չափով: Փոխհատուցումը տրամադրվում է օրենքով սահմանված սոցիալապես անապահով ընտանիքների և խոցելի այլ խմբերի ուսանողներին<sup>80</sup>: Սակայն բուհերը, որպես կանոն, մասնակի փոխհատուցում տրամադրում են վճարովի հիմունքներով սովորող ուսանողների ավելի քան 20%-ին:

Աղյուսակ 8

**Տվյալներ պետության կողմից աջակցություն ստացած սոցիալական խմբերի ուսանողների թվաքանակի և փոխհատուցված գումարի մասին, 2019 թ.**

Սոցիալական խումբը	Ուսանողների թվաքանակը		Փոխհատուցված գումարի չափը	
	Ուսանող	%-ը ընդհանուր թվից	Գումար (դրամ)	%-ը բարձր. կրթությանը հատկացված գումարից
<b>Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում</b>				
2 և ավելի երեխա ունեցող ուսանողներ	31	0.04%	12 759 950	0.12%
<b>Հոնված գինձառայողների զավակներ</b>				
1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք	530	0.66%	249 406 100	2.42%
Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներ				
<b>Ընդամենը (լրիվ փոխհատուցում)</b>	<b>561</b>	<b>0.7%</b>	<b>262 166 050</b>	<b>2.54%</b>
<b>Ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում</b>				
«Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում» հաշվառված ուսանողներ	2208	2.74%	524 794 439	5.09%
Սահմանամերձ բնակավայրերի ուսանողներ	733	0.91%	128 702 892	1.25%
2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ուսանողներ	569	0.71%	44 154 000	0.43%
<b>Ընդամենը (մասնակի փոխհատուցում)</b>	<b>3510</b>	<b>4.36%</b>	<b>697 651 331</b>	<b>6.77%</b>
<b>Ընդամենը (լրիվ և մասնակի փոխհատուցում)</b>	<b>4071</b>	<b>5.06%</b>	<b>959 817 381</b>	<b>9.31%</b>

Այսպես, 2017 թ. միջինում ՀՀ պետական բուհերը ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրել են վճարովի հիմունքներով սովորող իրենց ուսանողների 24.7%-ին (16843 ուսանողի)՝ սեփական միջոցներից հատկացնելով 1.965 մլրդ դրամ, ինչը կազմել է ուսանողների վարձավճարներից գոյացած գումարի միջինում 7.3%-ը<sup>81</sup>:

Չնայած պետական բուհերի կողմից իրենց ուսանողներին հատկացվող մեծածավալ աջակցությանը՝ այնուամենայնիվ, որոշակի թվով ուսանողներ դուրս են մնում բուհից կամ թողնում են ուսումը՝ ուսման վարձը վճարել չկարողանալու («նյութական անկարողությունների») պատճառով: Մասնավորապես, 2017 թ. պետական բուհերից անվճարունակության պատճառով դուրս է

<sup>80</sup> Տե՛ս «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, մաս 4.1:

<sup>81</sup> Տվյալները ստացված են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից:

մնացել վճարովի հիմունքներով բակալավրիատում սովորողների 0.7%-ը կամ 393 ուսանող<sup>82</sup>:

Հարկ է նշել, որ ուսման վարձավճարի փոխհատուցման են դիմում մի քանի անգամ ավելի մեծ թվով ուսանողներ, քան բուհերն ի վիճակի են տրամադրել:

**Այսպիսով, ՀՀ-ում միայն պետական բուհերի կողմից ուսման վարձավճարի փոխհատուցման ձևով աջակցություն է ստանում սոցիալապես անապահով և տարբեր խոցելի խմբերից շուրջ 4 անգամ ավելի շարժ ուսանող, քան պետության կողմից: Բուհերն այդ նպատակով ծախսում են շուրջ 2 անգամ ավելի մեծ գումար, քան պետությունը:**

**Բերված տվյալները վկայում են այն մասին, որ սոցիալական աջակցության կարիքը ուսանողների շրջանում շարժ մեծ է, իսկ պետության կողմից այդ նպատակով տրամադրվող ֆինանսական և այլ աջակցությունը անհամեմատ փոքր է առկա կարիքից:**

#### **Եզրահանգումներ**

- Տարեկան ուսման վարձավճարի առավելագույն չափը ՀՀ-ում 16 անգամ բարձր է նվազագույնից՝ տատանվելով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 6.4%-ից 103%-ի միջև:
- 2019 թ. ՀՀ պետական և միջպետական բուհերի բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողների համար ուսման վարձավճարի միջին կշռված չափը կազմել է 623300 դրամ կամ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 28.6%-ը, իսկ հանրապետության բոլոր՝ ներառյալ մասնավոր բուհերի համար՝ 557500 դրամ կամ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 25.6%-ը:
- ՀՀ-ում 2019 թ. ուսման վարձավճարի փոխհատուցման ձևով պետության կողմից աջակցություն ստացած սոցիալապես անապահով և խոցելի խմբերի ուսանողների թիվը կազմել է ուսանողների ընդհանուր թվի շուրջ 5%-ը, իսկ այդ նպատակով հատկացված գումարը կազմել է 959.8 մլն դրամ:
- Ուսման վարձավճարի չափի, ինչպես նաև սոցիալական օգնության նպատակով ֆինանսական աջակցություն ստացող և ուսման վարձ վճարող ուսանողների մասնաբաժինների ցուցանիշներով երկրները դասակարգվում են ըստ 4 հիմնական խմբերի: Այդ չափանիշների համակցությամբ ՀՀ-ն ամենից մոտն է 4-րդ խմբի երկրներին, որոնց ցուցանիշները, մյուս խմբերի երկրների համեմատությամբ, ամենավատն են: Բայց, թե՛ ուսման վարձավճարի չափի, թե՛ աջակցություն ստացող ուսանողների թվաքանակի գծով ՀՀ ցուցանիշները նկատելիորեն զիջում են նույնիսկ 4-րդ խմբի երկրների ցուցանիշներին: ՀՀ-ում վարձավճարի տարեկան չափը կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 25.6%-ը, ինչը 8.1%-ով մեծ է 4-րդ խմբի երկրների միջին ցուցանիշից, իսկ պետական աջակցություն ստացող ուսանողների մասնաբաժինը 30%-ով փոքր է այդ խմբի երկրների միջին ցուցանիշից:

<sup>82</sup> Տե՛ս «ՀՀ սոցիալական վիճակը 2017 թ. և դինամիկ շարքեր (2013-2017)» վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, էջ 225, [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2017\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_6.pdf):

- ՀՀ-ում պետության կողմից ուսանողներին հատկացվող սոցիալական աջակցության փոքր ծավալները մասամբ փոխհատուցվում են բուհերի կողմից, որոնք, համաձայն օրենսդրության, ևս կրում են ուսանողների որոշակի խմբերին սոցիալական աջակցություն տրամադրելու պատասխանատվություն:
- Ուսման վարձավճարի փոխհատուցման ձևով պետական բուհերի կողմից աջակցություն է ստանում շուրջ 4 անգամ ավելի շատ ուսանող, քան պետության կողմից, և բուհերն այդ նպատակով ծախսում են շուրջ 2 անգամ ավելի մեծ գումար, քան պետությունը:
- Սոցիալական աջակցության կարիք ունեցող ուսանողների թվաքանակը ՀՀ-ում անհամեմատ ավելի մեծ է, քան այդ նպատակով պետության կողմից ֆինանսական աջակցություն ստացողների թվաքանակը:

## 7. Առաջարկություններ

1. Բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման չափը ցույց է տալիս ցանկացած պետության հանրային պատասխանատվության աստիճանը՝ իր քաղաքացիների՝ բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացման ու հասարակության բոլոր, հատկապես՝ խոցելի խավերի համար հավասար հնարավորությունների ապահովման հարցում: Այն նաև վեր է հանում պետության պարտավորությունը մարդկային ներուժի, տնտեսության և հասարակության զարգացման, կամ, այլ կերպ ասած, տնտեսության տարբեր ճյուղերի համար մասնագետներ պատրաստելու հարցերում: Ուստի, պետությունը չի կարող խուսափել բավարար ֆինանսավորում հատկացնելու իր պարտավորությունից: Պետությունը պետք է հանդիսանա նշված հարցերի լուծման երաշխավոր, քանի որ մասնավոր ոլորտի ներդրումներով կամ ֆիզիկական անձանց միջոցներով բարձրագույն կրթության հավասար հնարավորությունների և մատչելիության ապահովման խնդիրները լուծում չեն ստանում: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է.

- տարեցտարի ավելացնել բարձրագույն կրթությանը պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորման չափը՝ ձգտելով հասցնել այն ԵԲԿՏ երկրների միջին ցուցանիշներին, քանի որ ՀՀ-ն ԵԲԿՏ անդամ է,

- մեծացնել ուսման վարձավճարի փոխհատուցում ստացող ուսանողների թվաքանակը և այդ նպատակով հատկացվող պետական ֆինանսավորումը,

- մշակել բնակչության սոցիալապես անապահով և խոցելի խմբերի ընտանիքների երեխաների՝ բարձրագույն կրթություն մուտք գործելուն (բուհ ընդունվելուն) և ուսումնառության ողջ ընթացքում ուսանող-երեխաներին աջակցելու նպատակային քաղաքականություն՝ կիրառելով պետական և ոչ պետական աջակցության տարատեսակ փաթեթներ և գործիքներ, այդ թվում՝

- նպաստավոր պայմաններով պետական ուսանողական վարկերի տրամադրում<sup>83</sup>,
- ոչ լրիվ դրույքով աշխատանքով ապահովման «աշխատանք-ուսում» ծրագրերի իրականացում՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին՝ ուսման հետ կապված ծախսերը հոգալու համար գումար վաստակել,
- անվճար կամ շուկայականից էապես ցածր գներով հանրակացարանի կամ կեցության տրամադրման, բժշկական ապահովագրության, տրանսպորտային, համալսարանում գտնվելու ժամանակահատվածում սննդի և այլ սոցիալական ծառայությունների մատուցում,
- բարձրագույն կրթության մեջ գործատուների ներգրավվածության բարձրացում և նրանց կողմից ուսանողների համար տարատեսակ կառուցակարգերի կիրառում ու աջակցության ծավալների մեծացում,
  - մշակել և կիրառել ուսանող-երեխա ունեցող կարիքավոր ընտանիքներին պետական աջակցության տարատեսակ գործիքներ՝ հարկային արտոնությունների, ընտանեկան նպաստների, սուբսիդավորման և այլ ձևերով, քանի որ աջակցության նման ձևերը նվազեցնում են ընտանիքների ֆինանսական բեռը՝ կապված իրենց ուսանող-երեխաների ուսման հետ,
  - բուհերին ֆինանսավորում հատկացնել ենթակառուցվածքների զարգացման և նորարարությունների խթանման նպատակով՝ նպաստելով կրթության որակի բարձրացմանը:

2. Բարձրագույն կրթության ոլորտում պետական քաղաքականությունը պետք է ուղղվի ընդգրկվածության հետագա բարձրացմանը՝ ձգտելով հասցնել այն եվրոպական երկրների միջին ցուցանիշին, քանի որ, նախ, ՀՀ-ն ԵԲԿՏ անդամ է, երկրորդը՝ բարձրագույն կրթությունը երկրի տնտեսական աճի ու մրցունակության ապահովման կարևորագույն շարժիչներից և մարդկանց բարեկեցության բարձրացման հիմնական գրավականներից է: Այդ քաղաքականությունը ոչ ուղղակիորեն կնպաստի նաև սոցիալական անհավասարության հիմնախնդրի լուծմանը, քանի որ կմեծանան աղքատ ընտանիքների երեխաների՝ բուհ ընդունվելու հնարավորությունները:

### Օգտագործված գրականություն

1. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018», Վիճակագրական-վերլուծական զեկույց, ըստ 2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_4.pdf):
2. «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի), առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը հաստատե-

<sup>83</sup> Ներկայումս տրամադրվող ուսանողական վարկերի պայմանները չի կարելի համարել նպաստավոր (տե՛ս <https://www.conversebank.am/hy/state/>), և դրանք էականորեն զիջում են միջազգայնորեն ընդունված ուսանողական վարկերի պայմաններին:

- լու մասին» ՀՀ Կառավարության 25.04.2019 թ. N476-Ն, 03.05.2018 թ. N 538-Ն և 20.04.2017 թ. N 434-Ն որոշումներ:
3. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք:
  4. «ՀՀ 2015 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2014 թ. դեկտեմբերի 4-ին, <https://www.gov.am/files/docs/1470.pdf>:
  5. «ՀՀ 2016 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք:
  6. «ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2017 թ. դեկտեմբերի 8-ին, <https://www.gov.am/files/docs/2575.pdf>:
  7. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2019», Ազգային հաշիվների համակարգ, ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/file/doc/99516783.pdf>:
  8. «ՀՀ 2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2018 թ. նոյեմբերի 22-ին, <https://www.gov.am/files/docs/3124.pdf>:
  9. ՀՀ Կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգ»:
  10. «2013 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն», Գնահատման և թեստավորման կենտրոն, Եր., 2013, <http://www.atc.am/files/verlucutyunner/2013%20Miasnakan%20qonutyunner%20yndhanur.pdf>:
  11. «2017 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն», Գնահատման և թեստավորման կենտրոն, Եր., 2017, <http://www.atc.am/files/verlucutyunner/2017/2017%20miasnakan%20ynhanur.pdf>:
  12. «2019 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն», Գնահատման և թեստավորման կենտրոն, Եր., 2013, <http://www.atc.am/files/verlucutyunner/2019/2019-MIASNAKAN%20YNDHANUR.pdf>:
  13. «ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ. և դինամիկ շարքեր (2014-2018)» վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2019, [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_6.pdf):
  14. «ՀՀ սոցիալական վիճակը 2017 թ. և դինամիկ շարքեր (2013-2017)» վիճակագրական ժողովածու, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2018, [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2017\\_6.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_6.pdf):
  15. «ՀՀ սոցիալական վիճակը 2012 թ. և դինամիկ շարքեր (2007-2012)», վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2013, [https://www.armstat.am/file/article/soc\\_12\\_11-12.pdf](https://www.armstat.am/file/article/soc_12_11-12.pdf):
  16. «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները», Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2015, [http://www.minsportyouth.am/files/post/1463656793-1%20\(1\).pdf](http://www.minsportyouth.am/files/post/1463656793-1%20(1).pdf):

17. Calderon A., The higher education landscape is changing fast, World University News, 22 June 2018, <https://www.universityworldnews.com/post.php?story=2018062208555853>.
18. Lane J. E., Higher Education and Economic Competitiveness, in the book "Universities and Colleges as Economic Drivers: Measuring Higher Education's Role in Economic Development", SUNY Series, Critical Issues in Higher Education, State University of New York Press, 2012, [https://www.researchgate.net/profile/Jason\\_Lane3/publication/271387344\\_Higher\\_Education\\_and\\_Economic\\_Competitiveness/links/54cf9ef60cf298d65664b618.pdf](https://www.researchgate.net/profile/Jason_Lane3/publication/271387344_Higher_Education_and_Economic_Competitiveness/links/54cf9ef60cf298d65664b618.pdf).
19. OECD (2018), Education at a Glance 2018: OECD Indicators, OECD Publishing, Paris, <http://dx.doi.org/10.1787/eag-2018-en>.
20. European Commission /EACEA/ Eurydice (2011). Modernisation of Higher Education in Europe 2011: Funding and the Social Dimension. Brussels: Eurydice. <http://www.finhed.org/media/files/12-131EN.pdf>.
21. European Commission/EACEA/Eurydice, 2018. The European Higher Education Area in 2018: Bologna Process Implementation Report. Luxembourg: Publications Office of the European Union, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna\\_internet\\_0.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/bologna_internet_0.pdf).
22. European Commission/EACEA/Eurydice, 2018. National Student Fee and Support Systems in European Higher Education – 2018/19. Eurydice – Facts and Figures. Luxembourg: Publications Office of the European Union, [https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee\\_support\\_2018\\_19\\_report\\_en.pdf](https://eacea.ec.europa.eu/national-policies/eurydice/sites/eurydice/files/fee_support_2018_19_report_en.pdf)
23. The World Bank Data, School enrollment, tertiary (% gross), <https://data.worldbank.org/indicator/SE.TER.ENRR>.
24. World Economic Outlook - GDP per capita, International Monetary Fund. 2019, <https://www.imf.org/external/datamapper/PPPPC@WEO/OEMDC/ADVEC/WEOWORLD/CAN>.
25. UNESCO Institute for Statistics, <http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=144>.
26. "Overview of the Ministry of Education, Culture, Sports, Science and Technology", MEXT, [https://www.mext.go.jp/en/about/pablication/\\_icsFiles/afieldfile/2019/03/13/1374478\\_001.pdf](https://www.mext.go.jp/en/about/pablication/_icsFiles/afieldfile/2019/03/13/1374478_001.pdf).



**КАРИНЕ АРУТЮНЯН**

*Ректор государственного университета им. В.Брюсова,  
кандидат физико-математических наук*

***Социальная направленность системы высшего образования в Республике Армения.*** – В настоящей статье, с точки зрения социальной справедливости и равенства, анализируется одна из декларированных целей Болонского процесса - социальная направленность высшего образования, ее сущность и значение.

В статье подробно рассмотрены проблемы социального характера в системе высшего образования Армении. Были изучены качественно-количественные аспекты связи проблемы бедности с ограничениями доступа к высшему образованию, а также рассмотрены реальные возможности получения высшего образования для разных социальных групп населения.

Автором был произведен сравнительный анализ государственной политики финансирования высшего образования Армении с политикой других стран и регионов мира, на основе международных показателей: охвата высшим образованием, платного и бесплатного обучения, финансирования и т.д.

Были изучены также финансовые и другие важные факторы, которые негативно влияют на доступ к высшему образованию, создавая неравные условия для уязвимых групп населения и приводя их к весьма ограниченному вовлечению в высшем образовании. Рассмотренные факторы: (а) ограниченная сумма средств, выделяемых на высшее образование из государственного бюджета, (б) плата за обучение, которая выше среднемесячного дохода семей, живущих за чертой бедности; (в) ограниченные возможности для получения государственных пособий, стипендий и других форм поддержки студентов. Произведен сравнительный анализ данных за последние пять лет. В рамках статьи обсуждаются также проблемы, связанные с поддержкой студентов из уязвимых групп населения.

**Ключевые слова:** *высшее образование, социальная направленность, охват, бедность, плата за обучение, финансирование.*  
JEL: I23, I24

**KARINE HARUTYUNYAN**

*Rector of Brusov State University,  
PhD in Physical and Mathematical Sciences*

***Social Dimension of the Higher Education System in the Republic of Armenia.*** – The paper analyzes one of the goals of Bologna Process: the essence and importance of the social dimension of higher education in terms of social justice and equality.

Particularly, the research presents the results of the case study on the social dimension policies in Armenia and suggests measures for improving them. It studies the problem of strong correlation between access to higher education and poverty from the qualitative and quantitative points of view. The real opportunities for participation and

completion of higher education for different social groups of the population are analyzed.

A comparative analysis of the government policy in the field of higher education financing in Armenia with the policies in different regions and countries is conducted. The analysis is conducted based on the internationally accepted higher education indicators on enrollment, funding, tuition fees, etc. The study also examines financial and other key factors negatively impacting on the access to and participation in higher education creating inequity towards specific groups of population and resulting in their limited representation. The revealed factors are: (i) the extremely limited state funding allocated to the higher education institutions; (ii) tuition fees, which, on average, are higher than monthly income of families living below the official poverty line; (iii) insufficient number of state scholarships, stipends and limited opportunities and forms of student support in Armenia. The findings are based on the comparative analysis of data for the last five years.

Finally, the study examines the issues concerning support to students from the vulnerable groups of the population.

**Key words:** *higher education, social dimension, enrollment, poverty, tuition fees, financing.*

JEL: I23, I24